

## Վերաբացման Արձանագրություններ K-12 Դպրոցների Համար. Հավելված T1

Վերջին Թարմացումները (Փոփոխությունները նշված են դեղին գույնով)

1/4/22

- Պարզեցվել է լեզուն՝ փակ և բացօթյա տարածքներում աշակերտների դիմակ կրելու պահանջների վերաբերյալ:

1/1/22

- Անձնակազմի բոլոր իրավասու անդամներին և աշակերտներին խստորեն հորդորվում է ստանալ COVID-19-ի դեմ պատվաստանյութի խթանիչ դեղաչափը՝ ի հավելումն իրենց հիմնական պատվաստանյութի շարքի:
- COVID-19-ի համար թեստավորումը պահանջվում է բոլոր սերտ շփում ունեցած անձանցից՝ կոնտակտավորներից, որոնց թույլատրվում է մնալ դպրոցում վարակակրի հետ շփումից անմիջապես հետո՝ անկախ պատվաստման կամ խթանիչ դեղաչափը ստանալու կարգավիճակից:
- Այժմ պահանջվում է դիմակ կրել բոլոր բացօթյա գործողությունների ժամանակ, երբ ֆիզիկական հեռավորություն պահպանելը հնարավոր չէ, բացառությամբ ուտելիս կամ խմելիս:
- Աշխատակիցները պետք է կրեն արդիականացված դիմակներ (վիրաբուժական դիմակ կամ ավելի բարձր մակարդակի անձնական պաշտպանության միջոց (PPE)):
- Աշակերտներին խստորեն հորդորվում է կրել դեմքը լավ գրկող, ոչ կտորից պատրաստված դիմակներ, որոնք ունեն ոչ հյուսված նյութից պատրաստված մի քանի շերտ և քթի հատվածում՝ լար:

12/9/21.

- Թարմացվել է՝ պարզաբանելու համար, որ այն աշակերտները, որոնք որպես խմբի անդամ նվազում են փողային գործիքներ փակ տարածքներում, պետք է գործիքները նվազեցնեն մյուսներից գտնվեն առնվազն 3 ոտնաչափ հեռու (ի հավելումն այլ պահանջների կատարման):

Լոս Անջելեսի Երջանի Հանրային Առողջության Վարչությունը (DPH) որդեգրում է գիտական և հանրային առողջապահության փորձի վրա հիմնված փուլային մոտեցում՝ թույլատրելու անցումային մանկապարտեզից մինչև 12-րդ դասարանի աշակերտների համար դպրոցական ծառայությունների ապահով վերաբացումը: Ի հավելումն Նահանգի Հանրային Առողջության Պատասխանատուի և Կալիֆոռնիայի Կրթության Վարչության կողմից դպրոցին ներկայացված պայմանների՝ դպրոցները պետք է հետևեն նաև աշխատակիցների և աշակերտների անվտանգության և վարակի վերահսկման սույն արձանագրություններին:

Խնդրում ենք հաշվի առնել, որ այս փաստաթուղթը կարող է թարմացվել նոր տեղեկությունների և աղբյուրների հասանելի դառնալու դեպքում: Այցելեք [ph.lacounty.gov/Coronavirus](http://ph.lacounty.gov/Coronavirus)՝ այս փաստաթղթի թարմացումներին ծանոթանալու համար:

Այս փաստաթուղթը սկսվում է Լոս Անջելեսի Երջանում (LAC) դպրոցական կրթության ներկա դրույթների քննարկումով, որին հաջորդում են դպրոցի միջավայրին հատուկ անվտանգության ռազմավարությունների վերաբերյալ տեղեկությունները:

TK-12-ի վերաբացման ցանկը նախատեսում է անվտանգության միջոցառումներ հինգ ոլորտներում.

- (1) Աշխատավայրին հատուկ գործողությունների ծրագրեր ու գործնական քայլեր՝ պաշտպանելու աշխատակցների և աշակերտների առողջությունը
- (2) Հնարավորության դեպքում ֆիզիկական հեռավորություն սահմանելու միջոցառումներ

- (3) Վարակի վերահսկումը բարելավելու միջոցառումներ
- (4) Հաղորդակցություն աշխատակիցների, աշակերտների և աշակերտների ընտանիքների և հանրության հետ
- (5) Կարևոր ծառայություններին հավասար հասանելիություն ապահովող միջոցառումներ:

Այս հինգ առանցքային ոլորտները պարունակում են բազմաթիվ ռազմավարություններ, որոնք ձեր դպրոցը կարող է նախընտրել իրականացնել, երբ ձեր հաստատությունը մշակի բոլոր աշխատակիցների, աշակերտների և այցելուների համար ապահով միջավայր ստեղծելու ծրագիր: Չնայած ներկայումս բոլոր դպրոցներում պահանջվում են կանխարգելիչ և պաշտպանական որոշ միջոցառումներ, որոնք հստակ նշված են որպես այդպիսին հետևյալ արձանագրության մեջ՝ միջոցառումների մեծ մասը ընտրովի են և կամավոր: Այնուամենայնիվ, դեռևս նպատակահարմար է, որ դպրոցները ամբողջությամբ վերաբացվելիս իրականացնեն COVID-19-ի մեղմացման ռազմավարության բազմաթիվ շերտեր՝ սահմանափակելու դպրոցի տարածքում հիվանդության դեպքերը և փոխանցումը: [Դպրոցում Վարակի Հետ Շփումների Կառավարման Ծրագրին](#) համապատասխան բոլոր միջոցառումները **պետք է** իրականացվեն, և դրանք կիրառելի են տեղում աշխատող ողջ անձնակազմի համար: K-12 Դպրոցների համար լրացուցիչ աղբյուրներ կարելի է գտնել [TK-12 Դպրոցների COVID-19-ի Գործիքակազմում](#):

**Վերաբացման Ընդհանուր Ուղեցույց Բոլոր Դպրոցների Համար**

Այս պահին բոլոր դպրոցներին թույլատրվում է վերաբացվել TK-12-ի ցանկացած դասարանի բոլոր աշակերտների համար:

**Նշում դպրոցներում գործող երեխաների խնամքի ծրագրերի համար:** Տեղական Կրթական Գործակալությունները (LEAs) և դպրոցները, որոնք առաջարկում են երեխաների ցերեկային խնամքի ծառայություններ դպրոցի տարածքում, պետք է հետևեն Հանրային Առողջության Վարչության [Վաղ Խնամքի և Կրթության \(ECE\) Մատակարարների Ուղեցույցին](#):

**COVID-19-Ի ԴԵՍ ՊԱՏՎԱՍՏՈՒՄԸ ՊԱՇՏՊԱՆՎԵԼՈՒ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆ Է**

Ձեր դպրոցում պատվաստման բարձր մակարդակի հասնելը լավագույն միջոցն է դպրոցում վարակման և վարակի փոխանցման վտանգը նվազեցնելու, ամբողջովին պատվաստված անձանց շրջանում ծանր հիվանդության, հոսպիտալացման և մահվան վտանգը մեծապես նվազեցնելու համար և պաշտպանության լրացուցիչ շերտ ապահովելու նրանց համար, որոնք չեն կարող լիովին պատվաստվել, ունեն իմունային անբավարարություն կամ լուրջ առողջական խնդիրներ: Այդ պատճառով, ի հավելումն սույն արձանագրության մեջ գրված բոլոր պահանջների և հորդորների, դպրոցներին կոչ է արվում որդեգրել ռազմավարություններ, որոնք կարգավորում, խթանում և հեշտացնում են COVID-19-ի դեմ պատվաստումը **և խթանիչ դեղաչափեր ստանալը** դպրոցի անձնակազմի իրավասու բոլոր անդամների և աշակերտների համար: Խնդրում ենք ընթերցել [LACDPH Պատվաստումների Կլինիկայի Գործիքակազմը Դպրոցների Համար](#) ուղեցույցը, որը քայլ առ քայլ նշում է դպրոցում պատվաստման կլինիկա գործարկելու լավագույն գործողությունները: Տեղեկացված եղեք նաև, որ 2021 թվականի օգոստոսի 11-ին Կալիֆոռնիայի Նահանգի կողմից հրապարակված [Առողջության Պատասխանատուի Հրամանը](#) պահանջում է, որ դպրոցի բոլոր աշխատակիցները ներկայացնեն ամբողջական պատվաստման վերաբերյալ ապացույց կամ շաբաթական առնվազն մեկ անգամ թեստ հանձնեն: Նահանգը նաև հայտարարել է, որ աշակերտներից պահանջվելու է պատվաստվել դասարանային ուսուցման համար սկսած այն կիսամյակի սկզբից, որը կհաջորդի FDA-ի կողմից իրենց դասարանային մակարդակի համար (7-12 և K-6) պատվաստանյութի լիարժեք հաստատմանը:

TK-ից մինչև 12-րդ Դասարանի Վերաբացման Ստուգաթերթ

Հաստատության անուն՝ \_\_\_\_\_

Հասցե՝ \_\_\_\_\_

Առավելագույն Զբաղվածությունը՝ ըստ Հրդեհային Օրենսգրքի՝ \_\_\_\_\_

Մոտավոր ընդհանուր քառակուսի ոտնաչափ տարածքը, որը մատչելի է աշխատակազմի և/կամ աշակերտների համար՝ \_\_\_\_\_

Վարչական աշխատողների, ուսուցիչների և այլ աշխատակիցների ընդհանուր թիվը, որոնք կվերադառնան՝ աջակցելու աշակերտների համար նախատեսված անհատապես տրվող ծառայությունների վերսկսմանը.

Աշակերտների ընդհանուր թիվը, որոնք կվերադառնան՝ ըստ դասարանի (եթե չկան, մուտքագրեք 0):

TK: \_\_\_\_\_ K: \_\_\_\_\_ 1: \_\_\_\_\_ 2: \_\_\_\_\_ 3: \_\_\_\_\_ 4: \_\_\_\_\_ 5: \_\_\_\_\_  
6: \_\_\_\_\_ 7: \_\_\_\_\_ 8: \_\_\_\_\_ 9: \_\_\_\_\_ 10: \_\_\_\_\_ 11: \_\_\_\_\_ 12: \_\_\_\_\_

**ՆՇՈՒՄ:** «Աշխատակիցներ» և «աշխատակազմ» տերմիններն այս արձանագրություններում վերաբերում են այն անհատներին, որոնք դպրոցական հաստատությունում աշխատում են ցանկացած զբաղվածությամբ՝ կապված ուսուցման, մարզման, աշակերտների աջակցման, առանձին աշակերտների թերապիայի անցկացման կամ նրանց անհատական օժանդակություն տրամադրելու հետ, հաստատության մաքրման կամ սպասարկման, վարչական կամ ցանկացած այլ գործողության հետ, որն անհրաժեշտ է դպրոցի աշխատանքն ապահովելու համար: «Աշխատակիցները» կամ «աշխատակազմը» կարող են ներառել անհատների, որոնք անմիջականորեն վճարվում են համապատասխան դպրոցական համակարգի կողմից, վճարվում են հաստատությունների կողմից, որոնք գործում են որպես տվյալ դպրոցի կապալառուներ (պայմանագրային աշխատողներ), վճարվում են աշակերտներին ծառայելու համար դպրոցի հետ համագործակցող դրսի հաստատությունների կողմից, վճարվում են երրորդ անձանց կողմից՝ աշակերտներին մատուցելու անհատական ծառայություններ, ինչպես նաև կարող են ներառել չվճարվող կամավորներ, ովքեր գործում են դպրոցի ղեկավարության ներքո՝ իրականացնելու անհրաժեշտ գործառնություններ: Այս արձանագրություններում «ծնողներ» տերմինն օգտագործվում է բոլոր այն անձանց համար, որոնք հանդիսանում են աշակերտների խնամակալներ:

**A. ԱՇԽԱՏԱՎԱՅՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ ՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԱՇԽԱՏԱՎԱԶՄԻՆ («ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ») ԵՎ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ (ՆՇԵՔ ԿԻՐԱՌԵԼԻ ԲՈԼՈՐ ԿԵՏԵՐԸ)**

Դպրոցը պետք է ունենա COVID-19-ի Զսպման, Արձագանքման և Վերահսկման Ծրագիր, որը նկարագրում է դպրոցի բազմակողմանի մոտեցումը՝ կանխելու և վերահսկելու դպրոցում COVID-19-ի

տարածումը: Ծրագիրը ներառում է հետևյալ տարրերը, բայց չի սահմանափակվում միայն դրանցով.

- ❑ COVID-19-ի համապատասխանության նշանակված թիմ (compliance team), որը պատասխանատու է COVID-19-ի հետ կապված անվտանգության բոլոր արձանագրությունների հաստատման և իրականացման համար, ինչպես նաև ապահովելու համար, որ աշխատակազմը և աշակերտները գիտելիք ստանան COVID-19-ի վերաբերյալ: Այս թիմի մեկ անդամ նշանակվում է Հանրային Առողջության Վարչության (DPH) հետ կապի պատասխանատու, եթե դպրոցի տարածքում բռնկում է սկսվում:
- ❑ Ծրագիր կամ արձանագրություն այն քայլերի վերաբերյալ, որոնք անմիջապես պետք է ձեռնարկել, երբ դպրոցի ղեկավարությանը տեղեկացվում է, որ դպրոցական համայնքի որևէ անդամի (ուսուցչական կազմ, աշխատակազմ, աշակերտ կամ այցելու) COVID-19-ի թեստի արդյունքը դրական է եղել:
- ❑ Ծրագիրը ներառում է.
  - Վարակված անձի անհապաղ առանձնացում դպրոցական համայնքից և ինքնամեկուսացում տանը, եթե ծանուցումը ստանալու պահին վարակվածը դեռ դպրոցի տարածքում է: Ծրագիրը պետք է թույլ տա վարակվածի ժամանակավոր մեկուսացում դպրոցի տարածքում, եթե կարգավորումներ են հարկավոր, որպեսզի վարակված անձը վերադառնա տուն:
  - Տեղեկատվական թերթիկներ կամ այլ նյութեր, որոնք պետք է տրվեն վարակվածին (կամ ընտանիքի համապատասխան անդամ/ներին, եթե վարակվածը երեխա է), որոնք ընդգրկում են ինքնամեկուսացումը վերահսկող կանոնակարգեր և հղումներ հավելյալ տեղեկություններ պարունակող կայքերին:
- ❑ Դպրոցում Վարակի Հետ Շփումների Կառավարման Ծրագիր նախաձեռնելու ծրագիր կամ արձանագրություն՝ համապատասխան Հանրային Առողջության Վարչության ցուցումների, որը նախանշում է հետևյալ ընթացակարգերը.
  - Վարակված(ներ)ի մեկուսացում,
  - Դպրոցում վարակի հետ շփված մարդկանց բացահայտում,
  - Վարակի հետ շփված չպատվաստված աշխատակիցների և/կամ աշակերտների կարանտին,
  - Դպրոցում վարակի հետ շփված բոլոր անձանց, անկախ պատվաստման կարգավիճակից, թեստավորման հնարավորության ապահովում՝ որպես հետագա վերահսկման միջոցառումների հիմք:
  - Ծանուցում Հանրային Առողջության Վարչությանը աշխատակիցների և աշակերտների շրջանում COVID-19-ով վարակման հաստատված դեպքերի մասին, որոնք հիվանդանալու օրվան նախորդող 14 օրերի ընթացքում որևէ պահի գտնվել են դպրոցի տարածքում: Հիվանդության սկիզբ է համարվում COVID-19-ի թեստ հանձնելու կամ վարակված անձի Ախտանիշների Ի Հայտ Գալու Օրը՝ կախված նրանից, թե որն է ավելի շուտ տեղի ունեցել: Վարակման դեպքերի մասին զեկուցումը պետք է կատարվի դպրոցին դեպքի մասին ծանուցումից հետո՝ 1 աշխատանքային օրվա ընթացքում: Դա կարող է կատարվել առցանց՝ օգտագործելով [www.redcap.link/lacdph.educationsector.covidreport](http://www.redcap.link/lacdph.educationsector.covidreport) անվտանգ վեբ-հավելվածը <http://www.redcap.link/lacdph.educationsector.covidreport>, կամ ներբեռնելով և լրացնելով [COVID-19-ով Վարակված Անձանց և Նրանց Անմիջական Շփումների Ցանկը Կրթական Ոլորտի Համար](http://www.redcap.link/lacdph.educationsector.covidreport) ձևը և ուղարկելով այն [ACDC-Education @ph.lacounty.gov](mailto:ACDC-Education@ph.lacounty.gov) էլեկտրոնային հասցեին:
- ❑ Հանրային Առողջության Վարչությանը (DPH) խմբակային վարակման դեպքի (3 կամ ավելի դեպք 14 օրվա ընթացքում) մասին անմիջապես զեկուցման ծրագիր: Սա կարելի է իրականացնել օգտագործելով զեկուցման վերոնշյալ նույն տարբերակը՝ (1) զեկույցը ներկայացնելով առցանց <http://www.redcap.link/lacdph.educationsector.covidreport>, կամ (2) լրացնելով [COVID-19-ով Վարակված Անձանց և Նրանց Անմիջական Շփումների Ցանկը Կրթական Ոլորտի Համար](http://www.redcap.link/lacdph.educationsector.covidreport) ձևը և ուղարկելով այն [ACDC-Education@ph.lacounty.gov](mailto:ACDC-Education@ph.lacounty.gov) էլեկտրոնային հասցեին: Հանրային Առողջության Վարչությունը (DPH) կհամագործակցի դպրոցի հետ՝ որոշելու արդյոք ք վարակման խմբակային դեպքը բռնկում է, որի դեպքում կպահանջվի Հանրային Առողջության կողմից բռնկման արձագանք:

- ❑ Արտակարգ իրավիճակների ծրագրեր՝ անձամբ ներկայություն պահանջող դպրոցական գործողությունների ամբողջական կամ մասնակի փակման համար, եթե դա անհրաժեշտություն դառնա՝ հիմնվելով դպրոցում կամ համայնքում վարակի բռնկման վրա:
- ❑ Ծրագիր կամ արձանագրություն՝ COVID-19-ի թեստավորումը դպրոցի կանոնավոր գործունեության մեջ ներառելու համար:
  - Ծրագիրն առնվազն պետք է նկարագրի ռազմավարություն, որը կապահովի թեստավորմանը հասանելիություն այն աշակերտների կամ աշխատակիցների համար, որոնք ունեն ախտանիշներ, կամ էլ հայտնի է կամ կասկած կա, որ շփվել են SARS-CoV-2-ով վարակված անձի հետ: Նկատի ունեցեք, որ ներկայիս Cal/OSHA-ի COVID-19-ի Կանխարգելման՝ Արտակարգ Իրավիճակների Ժամանակավոր Չափանիշները ([Cal/OSHA ETS](#)) գործատուներից պահանջում են աշխատակիցներին վճարվող ժամերի ընթացքում առաջարկել անվճար թեստավորում.
    - o Ախտանիշներ ունեցող չպատվաստված աշխատակիցներին՝ անկախ վարակակրի հետ հայտնի շփման առկայությունից:
    - o Չպատվաստված աշխատակիցներին՝ վարակակրի հետ շփումից հետո:
    - o Պատվաստված աշխատակիցներին՝ վարակակրի հետ շփումից հետո, եթե նրանց մոտ ախտանիշներ են ի հայտ գալիս:
    - o Չպատվաստված աշխատակիցներին՝ բռնկման ժամանակ (3 կամ ավելի աշխատակիցների հիվանդության դեպքեր):
    - o Բոլոր աշխատակիցներին՝ մեծ բռնկման ժամանակ (20 կամ ավելի աշխատակիցների հիվանդության դեպքեր):
  - Այս պահին թեստավորումը պահանջվում է բոլոր աշխատակիցներից և աշակերտներից, որոնք հանդիսանում են կոնտակտավոր և մնում են դպրոցում վարակակրի հետ շփումից հետո, ներառյալ նրանցից, որոնք բավարարում են պատվաստման և խթանիչ դեղաչափերի ներկա պահանջները, ինչպես նաև այն աշակերտներից, որոնք չեն բավարարում ներկա պահանջները, սակայն նրանց թույլատրվում է շարունակել մասնակցել իրենց ուսումնական գործողություններին՝ ըստ փոփոխված կարանտինի: Անկեղծվում է, որ այս հրահանգի լիարժեք կատարումը տեղի կունենա արձակուրդից հետո դպրոցի կամ շրջանի վերաբացման օրվանից ոչ ուշ, քան երկու շաբաթ անց: Մեկուսացման և կարանտինի կանոնների փոփոխությունների և այդ կանոնների կիրառման մանրամասների համար այցելեք [Հավելված T2. Վարակման Կարավարման Ծրագիր K-12 Դպրոցների Համար](#):
  - Որպես լրացում՝ դպրոցը **պետք է** դիտարկի նաև վարակված անձանց հետ շփում չունեցած, ախտանիշներ չունեցող (ասիմպտոմատիկ) անձանց կանոնավոր թեստավորման ռազմավարությունը: Կալիֆորնիայի Հանրային Առողջության Վարչությունն (CDPH) այս պահին չի պահանջում ախտանիշներ չունեցող անձանց թեստավորման հատուկ հաճախականություն կամ ընթացակարգ: Այնուամենայնիվ, նահանգը ներառել է թեստավորման աջակցության տարբերակներ՝ թեստավորման լրացուցիչ պարագաների, փոխադրման (առաքման), լաբարատորիայի կարողության, արձանագրման և զեկուցման տեխնոլոգիաների, վերապատրաստման և ապահովագրության փոխհատուցման աջակցության միջոցով: Դպրոցներին խորհուրդ է տրվում տեղեկություններ ստանալ և դպրոցում թեստավորմանը վերաբերող աղբյուրները գտնել նահանգի [Անվտանգ Դպրոցներ Բոլորի Համար](#) կայքում: Համայնքում վարակի փոխանցման բարձր մակարդակի դեպքում Լոս Անջելեսի Շրջանը խորհուրդ է տալիս, որ պարբերական թեստավորումը ներառի նաև ամբողջովին պատվաստված անձանց, եթե միջոցները թույլ են տալիս: **Նկատի ունեցեք, որ ներկա պահին, հաշվի առնելով ընթացիկ համավարակի բռնկումը և օմիկրոն ենթատեսակի վարակելիության աճը, ախտորոշիչ թեստավորումը դառնում է ավելի կարևոր՝ որպես դպրոցի ներսում վարակի փոխանցումը սահմանափակելուն ուղղված մեղմացող**

**ռազմավարություն:** Թեև համընդհանուր ախտորոշիչ թեստավորումը չի պահանջվում այս արձանագրությամբ, խստորեն հորդորվում է այն դարձնել առաջնահերթ ռազմավարություն:

- Ծրագիրը պետք է նախատեսի, որ թեստավորման բոլոր արդյունքները զեկուցվեն Հանրային Առողջության Վարչությանը:
  - Խնդրում ենք նկատի ունենալ. ստուգող թեստավորումը խորհուրդ չի տրվում այն անձանց, որոնք վերջին 90 օրվա ընթացքում վերականգնվել են լաբորատոր հետազոտության արդյունքում հաստատված COVID-19-ից և չունեն ախտանիշներ (սպիմպտոմատիկ):
- Նկատի ունեցեք անձնակազմի խոցելի անդամներին (65-ից բարձր տարիքի աշխատակիցներ, ովքեր դեռևս լիովին պատվաստված չեն, և/կամ նրանք, ովքեր ունեն քրոնիկական առողջական խնդիրներ, որոնք վարակվելու դեպքում վերջիններիս բարձր վտանգի տակ կդնեն), հնարավորության դեպքում, այնպիսի աշխատանք հանձնարարել, որ կարելի է կատարել տնից: Այս կարգի աշխատակիցները պետք է քննարկեն իրենց մտահոգությունները իրենց սպասարկող բուժաշխատողի կամ մասնագիտացված առողջապահական ծառայությունների հետ, որպեսզի կայացնեն աշխատավայր վերադառնալու վերաբերյալ համապատասխան որոշումներ:
- Նկատի ունեցեք աշխատանքային գործընթացները վերաձևակերպել այնպես, որ դրանք համապատասխանեն ակադեմիական պահանջներին և աշակերտների կարիքներին՝ աշխատակիցների՝ տնից աշխատելու հնարավորություններն ավելացնելու համար:
- Բոլոր աշխատակիցներին ասվել է չգնալ աշխատանքի, եթե հիվանդ են կամ COVID-19-ով վարակված անձի հետ են շփվել: Դպրոցի ղեկավարությունը տեղեկատվություն է տրամադրել աշխատակիցներին [գործատուի կամ կառավարության կողմից հովանավորվող բացակայության նպաստների](#) վերաբերյալ:
- Ոչ-դպրոցական նպատակներով դպրոցական հաստատությունների օգտագործումը թույլատրվում է (համայնքային ժողովներ կամ միջոցառումներ, տեղի կլինիկաներ այցելություններ այն մարդկանց կողմից, ովքեր ոչ աշակերտ են, ոչ անձնակազմ, և այլն): Փակ դպրոցական հաստատությունների օգտագործումն առաջացնում է ներսի օդի և մակերեսների աղտոտման ավելի մեծ վտանգ, և պետք է զգույշ լինել, որպեսզի խուսափել դպրոցի կանոնավոր աշխատակիցների և աշակերտների՝ վարակի հետ անհարկի շփումից: Խորհուրդ է տրվում ոչ դպրոցական խմբերի կողմից փակ տարածով կառույցների օգտագործումից հետո սահմանված կարգով դրանք մաքրել: Բացօթյա մարզական խաղաղաշտերի օգտագործումը ոչ դպրոցականների երիտասարդական մարզական թիմերի, լիգաների կամ ակումբների կողմից թույլատրվում է, քանի դեռ հոգ է տարվում դպրոցի կանոնավոր աշխատակիցների և աշակերտների՝ վարակի հետ անհարկի շփումից խուսափելու մասին:
- Աշխատակիցների կողմից աշխատավայր մուտք գործելուց առաջ խորհուրդ է տրվում իրականացնել [աշխատակիցների ախտանիշների ստուգում](#): Մուտքի ստուգումը պետք է ներառի հազի, շնչարգելության, դժվարացած շնչառության և ջերմության կամ դողի ստուգում, ինչպես նաև այն, թե արդյո՞ք այդ պահին աշխատակցին հրահանգված է կարանտին պահպանել կամ մեկուսանալ: Ջերմաչափումը, հնարավորության դեպքում, խորհուրդ է տրվում:
- Նշված ստուգումները կարող են իրականացվել անձամբ՝ աշխատակցի հաստատություն ժամանելու պահին, կամ հեռավար կարգով՝ մինչև ժամանումը՝ թվային հավելվածի միջոցով կամ այլ տարբերակով:
  - Նկատի ունեցեք, որ ներկայիս [Cal/OSHA-ի Արտակարգ Իրավիճակների Ժամանակավոր Չափանիշները \(ETS\)](#) գործատուներից պահանջում են աշխատավայր չընդունել այն աշխատողներին, ովքեր ունեն COVID-19 ախտանիշներ և/կամ ամբողջովին պատվաստված չեն և ունեցել են սերտ շփում: Cal/OSHA-ն չի սահմանում աշխատողների ստուգման որևէ հատուկ մեթոդ, սակայն առաջարկվող որևէ մեթոդ կիրառելը կօգնի համապատասխանել գործող ETS-ին:
- Դիմակ կրելը պահանջվում է յուրաքանչյուր անձից, ով մուտք է գործում դպրոցի շինություն կամ

տրանսպորտ (դպրոցական ավտոբուսներ, ինչպես նաև դպրոցի շինություններ) և ով ունի շփում ուրիշների հետ (աշակերտների, ծնողների կամ այլ աշխատակիցների հետ):

- Աշխատակիցներին, որոնք շփում են այլ անձանց հետ, պետք է անվճար առաջարկել համապատասխան դիմակ, որը ծածկում է դեմքը և քիթը: Աշխատակիցը պետք է կրի դիմակը աշխատանքային օրվա ամբողջ ընթացքում և երբ շփում է, կամ հավանական է, որ շփում կունենա այլ անձանց հետ: Այն աշխատակիցները, որոնց բուժաշխատողը հրահանգել է չկրել դիմակ, պետք է կրեն դեմքի վահան՝ ստորին հատվածը ծածկող շերտով, եթե իրենց առողջական վիճակը թույլ է տալիս: Նախընտրելի է այն ծածկոցը, որը ամուր գրկում է կզակը: Միակողմանի փականներով դիմակներ չպետք է օգտագործվեն:
- Աշխատակիցները, որոնք ազատված են դիմակ կրելուց, **պետք է շարաթական առնվազն երկու անգամ COVID-19-ի թեստ հանձնեն, քանի դեռ աշխատակիցները չեն ներկայացրել COVID-19-ի դեմ ամբողջովին պատվաստման և իրավասու դառնալու դեպքում՝ խթանիչ դեղաչափը ստանալու ապացույց:** Համայնքում վարակի փոխանցման բարձր մակարդակի դեպքում Լոս Անջելեսի Երջանը խորհուրդ է տալիս, որ այդ պարբերական թեստավորումը ներառի նաև ամբողջովին պատվաստված, **խթանիչ դեղաչափը ստացած կամ չստացած անձանց, եթե միջոցները թույլ են տալիս:**
- **Դպրոցի բոլոր աշխատակիցներին արդիականացված դիմակներ տրամադրելու պահանջ:** Այս պահին դպրոցի բոլոր աշխատակիցները, ինչպես սահմանված է վերևում, պետք է կրեն վիրաբուժական կարգի դիմակներ (նաև կոչվում են բժշկական գործողությունների դիմակներ) կամ ավելի բարձր մակարդակի անձնական պաշտպանության միջոցներ՝ PPE (օրինակ՝ KN95 կամ N95 շնչառական դիմակներ): Նրանց, որոնք կրում են վիրաբուժական դիմակներ, խորհուրդ է տրվում կրել կրկնակի դիմակ՝ վիրաբուժական դիմակի վրայից կտորե դիմակ՝ ավելի լավ պաշտպանության համար: Միայն կտորե դիմակ կրելն այլևս ընդունելի չէ, քանի որ այն չի ապահովում վարակի աղբյուրի վերահսկման կամ անձնական պաշտպանության նույն մակարդակը, ինչ պատշաճ վիրաբուժական դիմակը կամ ավելի բարձր մակարդակի PPE-ն: Ակնկալվում է, որ այս հրահանգի լիարժեք կատարումը տեղի կունենա արձակուրդից հետո դպրոցի կամ շրջանի վերաբացման օրվանից ոչ ուշ, քան երկու շաբաթ անց:
- Գործատուներից պահանջվում է, ըստ պահանջի, ցանկացած չպատվաստված աշխատողի տրամադրել շնչառական սարքեր, ինչպես նաև հրահանգներ այն մասին, թե ինչպես ապահովել, որ դիմակը ճիշտ տեղավորվի դեմքին:
- Ամբողջ անձնակազմը **պետք է ներսում եղած ժամանակ մշտապես դիմակ կրի, բացառությամբ երբ միայնակ աշխատում են փակ դռներով անձնական գրասենյակներում, երբ նրանք միակ ներկա գտնվող անձն են մի քանի աշխատակիցների համար նախատեսված ընդարձակ, բաց աշխատավայրում կամ երբ ուտում և խմում են:**
- **Բոլոր աշխատակիցներից պահանջվում է դիմակ կրել նաև դպրոցի բացօթյա տարածքներում, բացառությամբ ուտելու կամ խմելու ժամանակ, ինչպես նաև բացօթյա մարդաշատ վայրերում, որտեղ հեռավորությունը հնարավոր չէ հեշտությամբ և հուսալիորեն պահպանել:**
- Խստորեն հորդորվում է, սակայն չի պահանջվում, որ աշակերտները կրեն արդիականացված դիմակներ, որոնք առնվազն դեմքը լավ գրկում են, ունեն ոչ հյուսված նյութից պատրաստված ոչ կտորե մի քանի շերտ և քթի հատվածում՝ լար: Մույն արձանագրությունը որևէ կերպ չի պահանջում, որ դպրոցը արդիականացված դիմակներ տրամադրի իր աշակերտներին, և անհրաժեշտ է հարգել ծնողների նախապատվությունը աշակերտի կրած անձնական պաշտպանության միջոցների (PPE) մակարդակի վերաբերյալ: **Այնուամենայնիվ, դեռևս բոլորից համընդհանուր կերպով պահանջվում է համապատասխան որևէ դիմակ կրել դպրոցի փակ և բացօթյա տարածքներում: Բացառությունները ներառում են ակտիվորեն ուտելու կամ**

**Խմելու ժամանակը, ինչպես նաև բացօթյա վայրերում լինելը, որտեղ ֆիզիկական հեռավորությունը կարող է հուսալիորեն պահպանվել:**

- Դիմակ կրելու մասին LACDPH-ի ամենաթարմ ուղեցույցի և տեղեկատվության համար հետևեք մեր [COVID-19-ի Դիմակներ](#) էջին:
- Այլընտրանքային պաշտպանական ռազմավարություն կարող է ընդունվել հարմարեցնելու համար Անհատականացված Կրթության կամ 504 Ծրագրում գտնվող աշակերտներին, ովքեր ունեն բժշկական պատճառներ դիմակ օգտագործել չկարողանալու կամ չհանդուրժելու համար: Այն աշակերտները, ովքեր ներկայացնում են պատշաճ փաստաթղթեր՝ ցույց տալով իրենց հաշմանդամ լինելը կամ այլ առողջական խնդիրներ, որոնք թույլ չեն տալիս իրենց ապահով կերպով դիմակ կրել, պետք է կրեն ստորին հատվածում կտորով դեմքի վահան, եթե նրանց առողջական վիճակը թույլատրում է: Փաստագրված առողջական խնդիր ունեցող աշակերտները, որոնք չեն կարող կրել դեմքի վահան և կտոր, կարող են դպրոցից կամ շրջանից պահանջել ողջամիտ այլընտրանք: Առողջական վիճակի, հոգեկան առողջության վիճակի, հաշմանդամության կամ լսողության խանգարման պատճառով դիմակ կրելուց ազատվելու գնահատումը բժշկական որոշում է, հետևաբար այն պետք է կատարվի բժշկի, բուժակի կամ այլ արտոնագրված բժշկական մասնագետի կողմից, որն աշխատում է բժշկի արտոնագրով: Առողջական վիճակի, հոգեկան առողջության, հաշմանդամության կամ լսողական խնդիրների հիմքով դիմակ կրելուց ազատվելու համար ինքնագնահատումը, ինչպես նաև ծնողի կողմից հաստատումը չեն հանդիսանում բժշկական որոշումներ: Փաստագրված առողջական վիճակի հիմքով բացառությունները միակ ընդունելի պատճառն են, որոնց հիման վրա աշակերտը կարող է ազատվել դպրոցում փակ տարածքում դիմակ կրելու պահանջից: Անձնական համոզմունքները կամ կրոնի հիմքով բացառությունները չեն տարածվում դիմակ կրելու պահանջների վրա:
- Խստորեն խորհուրդ է տրվում, որ բոլոր աշակերտները, որոնք ազատված են փակ տարածքներում դիմակ կրելուց, շաբաթական առնվազն երկու անգամ COVID-19-ի թեստ հանձնեն, քանի դեռ չեն ներկայացրել COVID-19-ի դեմ ամբողջովին պատվաստման ապացույց **(և խթանիչ դեղաչափի ապացույց, եթե իրավասու են):** Համայնքում վարակի փոխանցման բարձր մակարդակի դեպքում Լոս Անջելեսի Շրջանը խորհուրդ է տալիս, որ **այս պարբերական թեստավորումը ներառի նաև ամբողջովին պատվաստված և խթանիչ դեղաչափը ստացած** անձանց, եթե միջոցները թույլ են տալիս:
- Հանրային դպրոցները պետք է տեղեկացված լինեն AB 130-ում տեղ գտած պահանջների մասին, որպեսզի տրամադրեն ինքնուրույն ուսուցման ծրագրեր 2021-22 ուսումնական տարվա համար:
  - Խորհուրդ է տրվում, որ աշխատակիցներին հանձնարարվի ամեն օր լվանալ կամ փոխել իրենց դիմակները և ծնողներին հանձնարարվի ապահովել, որ երեխաներն ունենան մաքուր դիմակներ:
  - Դիմակների հետևողական և ճշգրիտ կիրառումն ապահովելու համար աշխատակիցներին խրախուսվում է չուտել կամ չխմել այլ ժամերի, բացի իրենց ընդմիջումների նախատեսված ժամերից, երբ նրանք կարող են ապահով կերպով հեռացնել դիմակները և ավելացնել մյուսներից իրենց ֆիզիկական հեռավորությունը: Լավագույն տարբերակն է դրսում ուտելը կամ խմելը, իսկ աշխատանքի խցիկում կամ աշխատակայանում ուտելը կամ խմելը ավելի նախընտրելի է, քան ընդմիջման սենյակում ուտելը, եթե խցիկը կամ աշխատակայանը միջնապատեր ունենալու և մյուսներից ավելի շատ հեռավորություն պահպանելու հնարավորություն ունի:
  - Հաշվի առեք աշխատողների միջև տարածության ավելացումը ցանկացած սենյակում կամ տարածքում,



որն օգտագործվում է անձնակազմի կողմից սննդի և/կամ ընդմիջումների համար, հատկապես այն դեպքում, երբ տարածքը համատեղ օգտագործելու են այն աշխատակիցները, որոնք լիովին պատվաստված չեն կամ որոնց պատվաստման կարգավիճակն անհայտ է:

Բոլոր աշխատակիցներին, ներսում աշխատող կապալառուներին (պայմանագրային աշխատողներին), վաճառողներին և առաքման անձնակազմին տրվում են հրահանգներ ներսում այլ մարդկանց շրջապատում դիմակ կրելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընդմիջման սենյակները, պետքարանները, դասասենյակներն ու այլ ընդհանուր տարածքները, որոնցից աշխատակազմն օգտվում է կամ որտեղ այցելում է, մաքրվում են ստորև ներկայացված հաճախականությամբ: Սահմանված մաքրումը խորհուրդ է տրվում աշխատանքային ժամերի ընթացքում ոչ պակաս, քան օրական մեկ անգամ, սակայն կարող է ավելի հաճախ իրականացվել:

- Ընդմիջման սենյակներ \_\_\_\_\_
- Պետքարաններ \_\_\_\_\_
- Դասասենյակներ \_\_\_\_\_
- Լաբորատորիաներ \_\_\_\_\_
- Բուժակի սենյակ \_\_\_\_\_
- Խորհրդատվության կամ աշակերտների աջակցման այլ տարածքներ \_\_\_\_\_
- Ընդունարան \_\_\_\_\_
- Այլ գրասենյակներ \_\_\_\_\_
- Այլ (լսարան, մարզասրահ, գրադարան, եթե բաց է) \_\_\_\_\_

Աշխատակազմի ընդմիջումների սենյակների հաճախակի հպման մակերեսները խորհուրդ է տրվում մաքրել օրական առնվազն մեկ անգամ:

Խորհուրդ է տրվում, որ COVID-19-ի դեմ արդյունավետ ձեռքերի ախտահանման միջոցը հասանելի լինի բոլոր աշխատակիցներին հետևյալ վայր(եր)ում (նշեք բոլոր կիրառելի կետերը).

- Շինության մուտք/եր, ելք/եր \_\_\_\_\_
- Կենտրոնական գրասենյակ \_\_\_\_\_
- Աստիճանավանդակի մուտքեր \_\_\_\_\_
- Վերելակի մուտք (եթե կիրառելի է) \_\_\_\_\_
- Դասասենյակներ \_\_\_\_\_
- Ուսուցչական կազմի ընդմիջման սենյակներ \_\_\_\_\_
- Ուսուցչական կազմի գրասենյակներ \_\_\_\_\_

Խորհուրդ է տրվում, որ աշխատակիցներին ընձեռնվի հնարավորություն ձեռքերը օձառով և ջրով հաճախակի լվանալու համար:

Այս Արձանագրության պատճենները տրամադրվել են բոլոր աշխատակիցներին:

Լրացուցիչ (ընտրովի)՝ նկարագրել այլ միջոցառումները.

**B. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԶԵՌՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՊԱՆՈՒՄԸ ԹՈՒՅԼ ՏԱԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ԱՇԿԵՐՏՆԵՐԻ ԵՎ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ ԿՈՒՏԱԿՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՉԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ (ՆՇԵԼ ԲՈԼՈՐԸ, ՈՐՈՆԷ ԿԻՐԱՌԵԼԻ ԵՆ)**

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ:** Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչությունը խորհուրդ է տալիս ձեռնարկել միջոցառումներ՝ հասնելու առաջարկվող ֆիզիկական հեռավորության պահպանմանը, եթե ֆիզիկական հեռավորություն պահպանելը չի խանգարում, որ արձանագրված բոլոր աշակերտները ներկա լինեն ամբողջ դպրոցական օրը: Սա հատկապես կարևոր է այն ժամանակ, երբ աշակերտների խմբերը գտնվում են դասասենյակից դուրս (օր.՝ միջանցքում) և/կամ ցանկացած ժամանակ, երբ դիմակները անհրաժեշտ է հանել խմբակային վայրում (օրինակ՝ ճաշի ժամ, ընդմիջում), որտեղ նախընտրելի է ֆիզիկական հեռավորության ավելացում: Այն իրավիճակների դեպքում, երբ ֆիզիկական հեռավորության պահպանումը հնարավոր չէ իրականացնել (օր.՝ շատ խիտ դասարաններ), 100% -ով դիմակ կրելուն հետևելը գերկարևոր է:

- Հաստատությունում թույլատրված աշխատողների առավելագույն քանակը՝ \_\_\_\_\_
- Պահանջվում է դիմակ կրել դպրոցական ավտոբուսներում և փոխադրամիջոցներում գտնվելու ամբողջ ընթացքում:
- Նկատի ունեցեք դպրոցական ավտոբուսներում աշակերտների միջև ֆիզիկական հեռավորությունը պահպանելու միջոցառումների կիրառումը, քանի որ շատ աշակերտներ դեռևս պատվաստված չեն: Այս միջոցառումները կարող են ներառել (նշեք բոլորը, որոնք կիրառելի են)
  - Ավտոբուսի յուրաքանչյուր նստարանին նստում է մեկ երեխա: \_\_\_\_\_
  - Օգտվում են ընդմիջվող շարքերից \_\_\_\_\_
  - Պատուհանները բաց են, եթե օդի որակը և վարորդի անվտանգությունը հնարավորություն են տալիս: \_\_\_\_\_
- Լրացուցիչ միջոցառումներ, որոնք կարելի է հաշվի առնել ֆիզիկական հեռավորությունն ապահովելու և դպրոցական ավտոբուսներում ուղևորների քանակը նվազեցնելու համար (նշեք բոլորը, որոնք կիրառելի են).
  - Դասերը սկսելու փոփոխված ժամեր՝ թույլ տալու ամեն ավտոբուսի մեկից ավելի ուղևորություններ կատարել դպրոցական օրվա սկզբին և ավարտին: \_\_\_\_\_
  - Միջոցառումների կիրառում, որոնք ծնողների համար հեշտացնում են աշակերտներին մեքենայով դպրոց բերելը, օրինակ՝ վաղ բացման հնարավորություն՝ անձնակազմի ներկայությամբ, կարճատև ավտոկայանումների ընդլայնում դպրոցներում և աշխատակազմի ներկայություն աշակերտներին մեքենայից իջեցնելու տարածքներում՝ ապահովելու աշակերտների անվտանգ տեղաշարժը մեքենայից իջնելուց մինչև դպրոց մտնելը: \_\_\_\_\_
  - Միջոցառումների իրականացում, որոնք օժանդակում են աշակերտների անվտանգ և տարիքին համապատասխան երթևեկությունը դեպի դպրոց՝ ներառյալ Անվտանգ Երթուղիներ Դեպի Դպրոց քայլող խմբերի համար, դպրոցների մոտ անցումների հսկիչների կիրառում, հեծանվային անվտանգության և հեծանվային երթուղու ծրագրավորում: \_\_\_\_\_
    - Ծնողները դպրոցի անձնակազմի հետ ներգրավված են միևնույն աշխատանքի մեջ, որպեսզի ապահովեն, որ այլընտրանքային երթևեկության տարբերակները պատշաճ կերպով դեկավարվեն, ինչպես նաև ներառվեն ֆիզիկական հեռավորության պահպանման և դիմակների օգտագործման ռազմավարությունները:
    - Շենքի ենթակառուցվածքը հարմարեցված է հեծանիվներով երթևեկությանն

առավելապես նպաստելու համար, և հնարավորինս ավելացված է հեծանիվները պահելու և կայանելու հնարավորությունը:

• Այլ. \_\_\_\_\_

Հաշվի առեք այնպիսի միջոցառումների կիրառումը, որոնք կնվազեցնեն կուտակումները, երբ աշակերտները, ծնողները կամ այցելուները մտնում դպրոցի տարածք և շարժվում են այնտեղով: Սրանք կարող են ներառել (նշեք բոլորը, որոնք կիրառելի են)

- Դասաժամերը փոփոխված են՝ խուսափելու կուտակումներից ընդհանուր տարածքներում և, երբ հնարավոր է, թույլատրելու մեկ դասարանի կամ փոքր խմբերի ցանկացած պահի շարժվել ընդհանուր տարածքներով (օրինակ՝ միջանցքներ կամ պետքարաններ):
- Դպրոցի աշխատակիցները կանգնում են միջանցքներում՝ ֆիզիկական հեռավորության պահպանումը խթանելու և կուտակումները նվազեցնելու համար, երբ աշակերտները ներս են մտնում և շարժվում դեպի դասասենյակներ: \_\_\_\_\_
- Վերելակի զբաղվածությունը, եթե կիրառելի է, սահմանափակվում է՝ նվազեցնելու կուտակումները: Բոլոր ուղևորներից պահանջվում է կրել դիմակներ: \_\_\_\_\_
- Հետևյալ միջոցառումները կարող են իրականացվել՝ սանդուղքների վրա կուտակումներ թույլ չտալու համար.
  - Դեպի վերև և ներքև սանդուղքների նշանակում \_\_\_\_\_
  - Դասերի միջև ընդմիջումների ժամերի փոփոխություններ \_\_\_\_\_
  - Դպրոցի աշխատակազմի կողմից սանդուղքների հսկողություն \_\_\_\_\_
  - Այլ. \_\_\_\_\_

Հաշվի առեք հաստատուն խմբերի ստեղծմանը և պահպանմանն ուղղված համադպրոցական մոտեցման որդեգրումը, որտեղ վերահսկող չափահասները և երեխաները միասին են մնում հնարավոր բոլոր զբաղմունքների համար (օրինակ՝ սնունդ, հանգիստ և այլն) և խուսափում են միախառնվել իրենց խմբից դուրս գտնվող մարդկանց հետ՝ ուսումնական ողջ օրվա ընթացքում: Հաստատուն խմբերը համարվում են լավագույն միջոց բոլոր դասարանների մակարդակներում, ուստի առաջարկվում են, բայց չեն պահանջվում:

- Անհատականացված Կրթական Ծրագրի (IEP) կամ 504 ծրագրերի աշակերտները, որոնք պահանջում են մասնագիտացված ծառայություններ, կարող են դուրս բերվել իրենց ընդհանուր կրթության դասարանից և խմբավորվել նմանատիպ ծառայություններ պահանջող աշակերտների հետ՝ իրենց համապատասխան ուսում և խնամք ստանալու համար:
- Մասնագիտացված անձնակազմի անդամից, որն օգնում է IEP կամ 504 ծրագրերի աշակերտներին և/կամ մասնագիտացված ծառայություններ է մատուցում, կարող է պահանջվել աշխատել տարբեր հաստատուն խմբերի հետ դպրոցական օրվա ընթացքում, և դա պետք է հարմարեցվի: Այդ նպատակով անձնակազմի յուրաքանչյուր անդամ, որն ամբողջովին պատվաստված չէ, պահանջվող վիրաբուժական դիմակից բացի պետք է կրի դեմքի վահան, եթե մուտք է գործում տարբեր դասասենյակներ: Ամբողջ անձնակազմին պետք է խրախուսել լվանալ կամ ախտահանել իրենց ձեռքերը դասասենյակից դուրս գալուց հետո և նախքան աշակերտների այլ խումբ ունեցող մեկ այլ դասարան մտնելը:

Հաշվի առեք այնպիսի միջոցառումների իրականացումը, որոնք թույլ կտան դասարանների միջև առաջարկվող ֆիզիկական հեռավորության պահպանումը, երբ հնարավոր է՝ առանց միջամտելու հիմնական գործողություններին: Սրանք կարող են ներառել հետևյալ միջոցառումները (նշեք բոլորը, որոնք կիրառելի են).

- Դասարանի կահույքը դասավորված է՝ առավելագույնի հասցնելու աշակերտների միջև և աշակերտների և ուսուցիչների միջև հեռավորությունը: Որպես լավագույն գործողություն՝ խուսափեք դասարաններում առանձնացված խմբակային նստատեղերի (“pod”) օգտագործումից: Երբ հեռավորություն պահպանել հնարավոր չէ, դիտարկեք անվտանգության այլ միջոցառումների իրականացումը, ներառյալ բարձր հետևողականությամբ դիմակներ կրելը:
- Դիտարկել մեղմացման այլ տարբերակներ, ինչպիսիք են հաստատուն խմբերը կամ բարելավված օդափոխությունը:
- Հնարավորինս պահպանել ավելացված հեռավորություն այն դեպքերում, երբ աշակերտները կամ անձնակազմի անդամները դիմակներ չեն կրում (օր.՝ ուտելու կամ խմելու, քնելու պատճառով)
- Դասարանների քնելու կամ հանգստանալու տարածքներում աշակերտների տեղավորել ավելացված հեռավորության՝ պահպանելով ոտք և գլուխ դիրքը:
- Այլ. \_\_\_\_\_

Հաշվի առեք հնարավորինս ֆիզիկական դաստիարակության դասը դրսում անցկացնելը և ընտրեք այնպիսի գործողություններ, որոնք թույլ են տալիս պահպանել ֆիզիկական հեռավորություն: Փակ տարածքներում անցկացվող ֆիզիկական դաստիարակության դասերին բոլոր ներկաներից պահանջում է կրել դիմակներ՝ բացառությամբ ջուր խմելիս:

Հաշվի առեք դպրոցական այնպիսի քաղաքականության իրականացում, որը խթանում է հանդերձարաններում ֆիզիկական հեռավորության պահպանումը: Այդ քայլերը ներառում են՝

- Հանդերձարաններ մտնելու թույլտվություն միայն այն դեպքերում, երբ հնարավոր է անձնակազմի կողմից վերահսկողություն: Հանդերձարանները հասանելի դարձնել հերթափոխով: Դիտարկեք աշակերտների և աշակերտ-մարզիկների կողմից հանդերձարաններում անցկացրած ընդհանուր ժամանակի սահմանափակումը, օրինակ՝ առաջարկեք աշակերտ-մարզիկներին մարզվելուց և խաղալուց հետո ցնցուղ ընդունել տանը:
- Աշակերտների հագուստի, գրքերի և այլ պարագաների պահման այլընտրանքային տարբերակների ստեղծում:

Հաշվի առեք այնպիսի միջոցառումների իրականացումը, որոնք կավելացնեն ֆիզիկական հեռավորությունը սնվելու ժամանակ, երբ աշակերտները առանց դիմակ կլինեն: Սրանք կարող են ներառել (նշեք բոլորը, որոնք կիրառելի են)

- Մուտն ուտում են դասասենյակներում կամ բացօթյա վայրերում՝ չխառնելով միմյանց տարբեր հաստատուն խմբերի աշակերտներին: \_\_\_\_\_
- Եթե աշակերտները շարք են կանգնում սնունդը վերցնելու համար, օգտագործվում են կպչուն ժապավեն կամ այլ գծանշաններ՝ աշակերտի միջև պատշաճ հեռավորության պահպանումը խթանելու համար:  
\_\_\_\_\_
- Աշխատակիցներ են նշանակվում սնվելու ընդմիջումների ժամանակ, որպեսզի պահպանեն հեռավորությունը և թույլ չտան, որ տարբեր հաստատուն խմբերի աշակերտները խառնվեն:  
\_\_\_\_\_
- Եթե ճաշում են ճաշարանում, ապա սնվելու ժամերը փոփոխվում են, որպեսզի նվազեցվի միաժամանակ ճաշարանում գտնվող խմբերի քանակը: \_\_\_\_\_
- Եթե ճաշում են ճաշարանում, սեղանների/աթոռների միջև տարածությունն ընդլայնվում է,

որպեսզի ուսելու ժամանակ աշակերտների միջև պահպանվի հեռավորություն: Որպես այլընտրանք՝ սեղանների/աթոռների միջև կարելի է օգտագործել պատնեշներ, եթե հեռավորությունը հնարավոր չէ պահպանել: \_\_\_\_\_

❑ Հաշվի առեք այնպիսի միջոցառումների կիրառումը, որոնք կխթանեն ֆիզիկական հեռավորության պահպանումը աշակերտների աջակցման ծառայությունների համար օգտագործվող դպրոցական տարածքներում:

- Աշակերտների աջակցման անձնակազմին, ներառյալ դպրոցի աշխատակիցներին (բուժակներ, խորհրդատուներ, թերապևտներ և այլն) և հարակից օժանդակող ծրագրերի աշխատակիցներին (բուժաշխատողներ, առողջապահության մանկավարժներ և այլն) խրախուսվում է հնարավորության դեպքում պահպանել ֆիզիկական հեռավորություն, երբ աշակերտներին աջակցող ծառայություններ են իրականացնում:
- Դպրոցի տարածքում աշակերտների աջակցման ծառայությունների համար կիրառվող կահույքն ու սարքավորումները այնպես են դասավորված, որ խթանվի ցանկացած երկու աշակերտի և/կամ աշակերտների ու անձնակազմի միջև հեռավորության պահպանումը:
- Հնարավորինս խուսափում են սարքավորումների և իրերի համատեղ օգտագործումից:
- Աշակերտներին աջակցման ծառայություններ մատուցող անձնակազմին տրամադրվում են Անձնական Պաշտպանիչ Միջոցներ (PPE)՝ համապատասխան Cal OSHA-ի պահանջներին:

**C. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ, ՈՐՈՆՔ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՆ ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ (ՆՇԵՔ ԲՈԼՈՐԸ, ՈՐՈՆՔ ԿԻՐԱՌԵԼԻ ԵՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ)**

❑ Նախքան աշակերտների, այցելուների և անձնակազմի դպրոց մտնելը խորհուրդ է տրվում ստուգել ախտանիշների առկայությունը: Ստուգումը պետք է ներառի հնարավոր COVID-19-ին համապատասխանող ախտանիշների և ցանկացած այլ ախտանիշների ստուգում, որոնք անձը կարող է ունենալ: Այս ստուգումները կարելի է իրականացնել հեռավար եղանակով (օգտագործելով՝ թվային հավելված կամ անհատապես՝ ժամանման պահին): Մուտքի պահին, որպես ստուգման մաս, կարող է ներառվել ջերմաչափումը՝ առանց հպման ջերմաչափող սարքի միջոցով, եթե հնարավոր է, հատկապես այն այցելուների համար, որոնք տանը կանոնավոր կերպով չեն ստուգվել:

- Այն աշակերտների, անձնակազմի և այցելուների մասին, որոնց ստուգման արդյունքը դրական է եղել մուտքի պահին կամ դպրոցական օրվա ընթացքում ցանկացած պահի, պետք է տեղեկացնել COVID-19-ի Համապատասխանության Խմբին (Compliance Team) (Տե՛ս Բաժին Ա): COVID-19-ի Համապատասխանության Խումբը կորոշի՝ արդյո՞ք անձը պետք է հեռանա դպրոցից՝ համաձայն Հանրային Առողջության Վարչության Կրթական Հաստատություններում [Ախտանիշների և Վարակի Հետ Շփումների Ստուգման Ուղեցույցի](#): Այն աշակերտներին, որոնց ստուգման արդյունքը դրական է, պետք է տրամադրել վիրաբուժական դիմակ, եթե արդեն նրանք չեն կրում խորհուրդ տրվող որակի դիմակ, և տեղափոխել նախապես ընտրված առանձին մեկուսացման տարածք, որտեղ նրանք կարող են մնալ մինչև հեռանալու մասին որոշում կկայացվի և կկազմակերպվի նրանց տուն վերադառնալը:
- Համաձայն Հանրային Առողջության Վարչության Ախտանիշների և Վարակման Ստուգման Ուղեցույցի՝ այն աշակերտներին, անձնակազմի անդամներին և այցելուներին, որոնք սերտ շփում են ունեցել հնարավոր COVID-19-ի դրական արդյունք ունեցող անձի հետ, պետք է տեղեկացնել հնարավոր վարակման մասին: Այդ անձանցից չի պահանջվում կարանտին պահպանել, քանի դեռ վարակման փաստը չի հաստատվել COVID-19-ի վիրուսային ախտորոշիչ թեստի դրական արդյունքի կամ բուժաշխատողի կողմից հիվանդանոցային ախտորոշման

միջոցով: Աշակերտներին, որոնք հաստատվել է, որ վարակակրի հետ շփում են ունեցել, ուղեկցում են նախապես ընտրված մեկուսացման տարածք, որտեղ նրանք կարող են մնալ մինչև կազմակերպվի նրանց տուն վերադառնալը, բացառությամբ այն դեպքերի, երբ աշակերտը չի համապատասխանում չափանիշներին, համաձայն որոնց, անհրաժեշտ է մնալ դասասենյակում վարակակրի հետ շփմանը հաջորդող ժամանակաշրջանում (աշակերտները, որոնք մնում են դասասենյակում վարակակրի հետ շփումից հետո, պետք է կրեն դեմքը լավ գրկող, ոչ կտորից դիմակ, որն ունի ոչ հյուսված նյութից պատրաստված մի քանի շերտ և քթի հատվածում՝ լար: Կարանտինի այդ տարածքը առանձին է ախտանիշներ ունեցող աշակերտների համար նախատեսված տարածքից: Դա կարող է լինել առանձին սենյակ կամ նույն սենյակում առանձին տարածք, որը պատնեշով առանձնացված է: Տուն վերադառնալուց հետո, նրանց հանձնարարվում է ինքնակարանտին պահպանել, ինչպես դա պահանջվում է Առողջության Պատասխանատուի Կարանտին Պահպանելու Հրամանով:

☐ Մեծահասակների, միջին և ավագ դպրոցական տարիքի աշակերտների ստուգումը պետք է ներառի հարց տանը, դպրոցում կամ այլ վայրում վերջին 10 օրերի ընթացքում որևէ անձի հետ սերտ շփման մասին, որի COVID-19-ի թեստի արդյունքը դրական է եղել:

- Յուրաքանչյուր ոք, ով հետազոտվել է վերջերս վարակակրի հետ շփում ունենալու համար և հայտնում է վարակված անձի հետ սերտ շփում ունենալու մասին, պետք է ղեկավարվի հետևյալով՝ Հավելված T2-ի Ուղեցույց. Վարակման Կառավարման Օրագիր K-12 Դպրոցների Համար:

☐ Հաշվի առեք այնպիսի միջոցառումների իրականացումը, որոնք կսահմանափակեն անձնակազմի անդամ և աշակերտ չհանդիսացող անձանց այցելությունների հետևանքով վարակվելու վտանգը: Սա կարող է ներառել (նշեք բոլորը, որոնք կիրառելի են)

- Այցելուները պետք է գրանցվեն այցելուների մատյանում, որը ներառում է այցելուի անունը, հեռախոսահամարը և էլեկտրոնային հասցեն, որպեսզի այդ տեղեկություններն օգտավոր լինեն, եթե հետագայում դրանք անհրաժեշտ լինեն կոնտակտներին գտնելու համար: Եթե այցելուին մեկ այլ անձ պետք է ուղեկցի (օր.՝ թարգմանչական օգնություն, կամ այցելու անչափահաս է կամ ունի անչափահաս աշակերտներ), նրանց տվյալները նույնպես պետք է գրանցվեն այցելուների մատյանում: \_\_\_\_\_
- Դպրոցի ներսում այցելուների տեղաշարժը լավագույնս սահմանափակվում է նախատեսված տարածքներով, ինչպիսիք են՝ ընդունարանը կամ նախասրահի տարածքը, գրասենյակները, համաժողովների կամ հանդիպումների սենյակները և հանրային պետքարանները, որպեսզի նվազեցվի ցանկացած հաստատուն աշակերտական խմբի հետ անհարկի շփումը: \_\_\_\_\_
- Դպրոց ժամանող այցելուներին հիշեցվում է, որ նրանք կրեն դիմակներ դպրոցի ներսում գտնվելու ամբողջ ընթացքում: Սա վերաբերում է ինչպես բոլոր մեծահասակներին, այնպես էլ 2 տարեկան և ավելի բարձր տարիքի երեխաներին: Այն անձինք, որոնց բուժաշխատողը կարգադրել է չկրել դիմակ, պետք է կրեն ստորին հատվածում կտոր ամրացված դեմքի վահաններ, եթե իրենց առողջական վիճակը դա թույլ է տալիս: Նախընտրելի են կզակը գրկող կտորով դեմքի վահանները: Միակողմանի փականներով դիմակներ չպետք է օգտագործվեն: Ձեր աշխատակիցների և այցելուների անվտանգությունը ապահովելու համար դիմակները պետք է հասանելի լինեն այն այցելուներին, ովքեր ժամանել են առանց դիմակի: Այցելուների, ինչպես նաև ամբողջ դպրոցի անվտանգության համար խորհուրդ է տրվում, սակայն այս պահին չի պահանջվում, որ այցելուները դպրոցի տարածքում գտնվելիս կրեն ավելի բարձր կարգի դիմակ, օրինակ՝ վիրաբուժական կարգի (կամ բժշկական գործողությունների համար նախատեսված) դիմակ կամ ավելի բարձր մակարդակի անձնական պաշտպանության միջոց՝ PPE (օրինակ՝ KN95 կամ N95

շնչառական սարք): \_\_\_\_\_

❑ Խստորեն խորհուրդ է տրվում այնպիսի միջոցառումների իրականացումը, որոնց շնորհիվ դպրոցում կխթանվի լավագույն օդափոխությունը: Սա կարող է ներառել (նշեք բոլորը, որոնք կիրառելի են)

• Հնարավորության սահմանում դասասենյակներում սովորելու, սնվելու և այլ գործողությունների տեղափոխումը բացօթյա տարածք առավելագույնի է հասցվում, եթե դա թույլ է տալիս եղանակը: \_\_\_\_\_

• Դպրոցի օդափոխման (HVAC) համակարգը աշխատանքային լավ վիճակում է: Նախքան դպրոցի վերաբացումը հաշվի առեք HVAC համակարգի գնահատումը համապատասխան ինժեների կողմից, ով ծանոթ է Դպրոցների Վերաբացման Ուղեցույցին մշակված Ջեռուցման, Սառեցման և Օդափոխության Ամերիկյան Ընկերության կողմից (ASHRAE): \_\_\_\_\_

• Օդափոխման համակարգերը նախատեսված են՝ առավելագույնի հասցնելու ներսի/դրսի օդի փոխանակությունը, բացառությամբ, եթե դրսի պայմանները (վերջերս պատահած հրդեհներ, դրսի շատ բարձր ջերմաստիճան, օդում ծաղկափոշու բարձր քանակություն և այլն) սա դարձնում են աննպաստ: \_\_\_\_\_

• Հնարավորության դեպքում տեղադրվել են շարժական, բարձր արդյունավետության օդազտիչ սարքեր: \_\_\_\_\_

• Դռները և պատուհանները դպրոցական օրվա ընթացքում բաց են մնում, եթե հնարավոր է և եթե դրսի պայմանները դա թույլ են տալիս: Պետք է հաշվի առնվեն գործող հրդեհային անվտանգության օրենքները, որոնք պահանջում են հակահրդեհային դռների փակում: \_\_\_\_\_

• Օդի զտիչները արդիականացվել են ավելի բարձր արդյունավետության համար (նախընտրելի է MERV-13 կամ ավելի բարձր կարգը): \_\_\_\_\_

• Քանի որ մարզական սենյակներում տեղավորելիությունը մեծ է և տեղի են ունենում բարձր վտանգավորության գործողություններ, մարզադահլիճներում բարելավված օդափոխությունը կարևորագույն ռազմավարություն է՝ ուղղված բարձր վտանգավորության մրցակցային խաղերի արդյունքում առաջացող վիրուսների փոխանցման և բռնկումների վտանգը նվազեցնելուն: Օդափոխիչների ռազմավարական օգտագործումը հատակի մակարդակում օդափոխությունը բարելավելու համար կարող է զգալի ազդեցություն ունենալ այդ վտանգի նվազեցման վրա: Հետագա ցուցումների համար այցելեք [Մարզադահլիճներում Օդափոխության Լավագույն Գործողությունները](#):

• Այլ՝ \_\_\_\_\_

❑ Խորհուրդ է տրվում իրականացնել միջոցառումներ, որոնք կխթանեն դպրոցի ամբողջ տարածքի, մակերեսների և առարկաների պատշաճ մաքրումը: Դրանք կարող են ներառել (նշեք բոլորը, որոնք կիրառելի են)

• Սահմանվել է մաքրման ժամանակացույց՝ մաքրող միջոցները չափից քիչ կամ ավել օգտագործելուց խուսափելու համար: \_\_\_\_\_

• Ավտոբուսները մանրակրկիտ մաքրվում են ամեն օր և ախտահանվում են COVID-19-ի ախտանշաններ ունեցող ցանկացած անձի տեղափոխելուց հետո: Վարորդներին տրամադրվում են ախտահանիչ թաց անձեռոցիկներ և մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ՝ երթևեկության ընթացքում անհրաժեշտության դեպքում մակերեսները ախտահանելու համար: Հաճախակի հպման մակերեսները մաքրվում են ավտոբուսի

յուրաքանչյուր երթուղու ավարտից հետո: \_\_\_\_\_

- Ընդհանուր տարածքները և այդ տարածքներում հաճախակի հսկման առարկաները (սեղաններ, դռների բռնակներ, լույսերի անջատիչներ, խոհանոցի մակերեսներ, բռնակներ, գրասեղաններ, հեռախոսներ, ստեղնաշարեր, վերելակի անջատիչներ և կոճակներ, սենսորային էկրաններ, տպիչներ/պատճենահանող սարքեր, բռնվելու ձողեր և բազրիքներ) պետք է մաքրվեն առնվազն օրական մեկ անգամ կամ ավելի հաճախ, եթե միջոցները հնարավորություն են տալիս օգտագործել համապատասխան ապրանքներ (տե՛ս ստորև):  
\_\_\_\_\_
- Ցայտադրյունները կարող են հասանելի լինել օգտագործման համար: Լեգեոների հիվանդության և ջրի հետ կապված այլ հիվանդությունների վտանգը նվազագույնի հասցնելու համար քայլեր ձեռնարկե՛ք՝ ապահովելու, որ բոլոր ջրային համակարգերն ու առանձին մասերը (օրինակ՝ խմելու շատրվաններ, դեկորատիվ շատրվաններ) անվտանգ լինեն օգտագործման համար՝ հաստատության երկարատև չգործելուց հետո: Մա ներառում է հորդ ջրով պատշաճ լվացում և կարող է պահանջել մաքրման լրացուցիչ քայլեր (ներառյալ ախտահանումը): Տե՛ս Երկարատև Փակվելուց կամ Կրճատված Շահագործումից հետո Շենքերի Վերաբացման CDC-ի ուղեցույցը՝ <https://www.cdc.gov/coronavirus/2019-ncov/php/building-water-system.html>: \_\_\_\_\_
- Այն դեպքում, երբ անհատականացված այլընտրանքների կիրառությունը հնարավոր չէ, օրինակ՝ լաբորատորիաներում և նկարչության սենյակներում, որտեղ հարկ է լինում, որ որոշ սարքավորումներ օգտագործվեն բազմաթիվ աշակերտների կողմից, առարկաները և մակերեսները ախտահանվում են յուրաքանչյուր օգտագործումից հետո: \_\_\_\_\_
- Մաքրող ապրանքատեսակները, որոնք արդյունավետ են COVID-19-ի դեմ (դրանք թվարկված են Շրջակա Միջավայրի Պաշտպանության Գործակալության (EPA-N հաստատված ցուցակում), կիրառվում են համաձայն արտադրողի ցուցումների: Եթե EPA-ի կողմից հաստատված ախտահանիչ միջոցները հասանելի չեն, ապա կարող են կիրառվել այլընտրանքային միջոցներ (օրինակ՝ 1/3 բաժակ սպիտակեցնող (bleach) լուծույթին մեկ գալոն ջուր կամ 70% սպիրտ պարունակող լուծույթներ ավելացնել): Իրար մի՛ խառնեք սպիտակեցնող (bleach) կամ ախտահանիչ միջոցները. դա առաջացնում է թունավոր գոլորշիներ, որոնք կարող են շատ վտանգավոր լինել շնչելու համար: \_\_\_\_\_
- Մաքրողները և անձնակազմի այլ անդամները, ովքեր պատասխանատու են դպրոցական մակերեսների և առարկաների մաքրման և ախտահանման համար, պատրաստված են նյութերը ըստ արտադրողի ցուցումների, ինչպես նաև Cal OSHA անվտանգ օգտագործման պահանջներին ու «Առողջ Դպրոցների Մասին» Օրենքին համապատասխան օգտագործելու համար, եթե կիրառելի է: \_\_\_\_\_
- Մաքրողները և այլ անձնակազմի այլ անդամները, ովքեր պատասխանատու են մաքրման և ախտահանման համար, զինված են անձնական պաշտպանության համապատասխան միջոցներով (PPE), ներառյալ՝ ձեռնոցներ, աչքերի պաշտպանիչ միջոցներ, շնչառական պաշտպանիչ միջոցներ և այլ համապատասխան պաշտպանիչ միջոցներ, որոնք պահանջվում են տվյալ ապրանքն օգտագործելիս: \_\_\_\_\_
- Բոլոր մաքրող միջոցները երեխաների հասանելիությունից հեռու են և պահվում են սահմանափակ մուտքով տարածքներում: \_\_\_\_\_
- Մաքրման և ախտահանման ժամանակ օդափոխությունը հնարավորինս առավելագույնի է հասցվում: Եթե օդորակիչ է օգտագործվում, կիրառել այն գործողությունը, որը դրսի օդ է ներս բերում: Պետք է փոխել և ստուգել օդի գոտիները և գոտիչ համակարգը՝ ապահովելու օդի լավագույն որակ: \_\_\_\_\_



- Որոշվելու դեպքում դպրոցի տարածքների ընդլայնված մաքրումը և ախտահանումը պետք է կատարվի այն ժամանակ, երբ աշակերտները դպրոցում չեն, և հատկացվի համապատասխան ժամանակ, որպեսզի տարածքները լավ օդափոխվեն մինչև դպրոցական օրվա սկիզբը: \_\_\_\_\_
- Ձեռնարկվում են քայլեր՝ ապահովելու, որ հաստատության երկարատև փակվելուց հետո բոլոր ջրային համակարգերը և լվացարանները վերաբացման ժամանակ օգտագործման համար լինեն անվտանգ, որպեսզի նվազեցվի Լեգիոներների և ջրի հետ կապված այլ հիվանդությունների վտանգը: \_\_\_\_\_
- Պետքարանները, նախասենյակները, ընդմիջման սենյակները և հանգստի և այլ ընդհանուր տարածքները մաքրվում են ստորև ներկայացված հաճախականությամբ: Սահմանված մաքրումը խորհուրդ է տրվում աշխատանքային ժամերին ոչ պակաս, քան օրական մեկ անգամ, սակայն կարող է իրականացվել ավելի հաճախ:
  - Պետքարաններ \_\_\_\_\_
  - Նախասենյակներ/մուտքի տարածքներ \_\_\_\_\_
  - Ուսուցիչների/աշխատակազմի ընդմիջման սենյակներ \_\_\_\_\_
  - Դասասենյակներ \_\_\_\_\_
  - Ճաշարանի ճաշելու տարածք \_\_\_\_\_
  - Ճաշարանի սննդի պատրաստման տարածք \_\_\_\_\_
  - Ընդունարան \_\_\_\_\_
  - Այլ գրասենյակներ \_\_\_\_\_
  - Այլ տարածքներ \_\_\_\_\_

Միջոցառումներ են իրականացվում՝ ապահովելու, որ անձնակազմը, աշակերտները և այցելուները պատշաճ կերպով դիմակներ կիրառեն ներսում գտնվելու ամբողջ ընթացքում: Սա կարող է ներառել (նշեք բոլորը, որոնք կիրառելի են)

- Անձնակազմին, ծնողներին և աշակերտներին տեղեկացվել է դիմակներ կրելու պահանջի վերաբերյալ՝ նախքան դպրոցական տարվա սկսելը և կանոնավոր հաճախականությամբ՝ ամբողջ ուսումնական տարվա ընթացքում: \_\_\_\_\_
- 2 տարեկան և ավելի մեծ բոլոր աշակերտներից պահանջվում է դպրոցի տարածքի ներսում եղած ամբողջ ընթացքում կրել դիմակներ, բացառությամբ, երբ ուտում են, խմում կամ այլ գործողություններ իրականացնում, որոնք բացառում են դիմակներ կրելը: \_\_\_\_\_
- 2 տարեկան և ավելի բարձր տարիքի բոլոր աշակերտներից պահանջվում է դիմակ կրել նաև դպրոցի բացօթյա մարդաշատ տարածքներում, ինչպես նաև բացօթյա այլ տարածքներում, որտեղ հեռավորություն հնարավոր չէ պահպանել:
- Խստորեն հորդորվում է, սակայն չի պահանջվում, որ աշակերտները կրեն արդիականացված, դիմակներ: Խորհուրդ են տրվում դեմքը լավ գրկող, ոչ կտորից դիմակներ, որոնք ունեն ոչ հյուսված նյութից պատրաստված մի քանի շերտ և քթի հատվածում լար: Սույն արձանագրությունը որևէ կերպ չի պահանջում, որ դպրոցը արդիականացված դիմակներ տրամադրի իր աշակերտներին, և անհրաժեշտ է հարգել ծնողների նախապատվությունը աշակերտի կրած անձնական պաշտպանության միջոցների (PPE) մակարդակի վերաբերյալ: **Այնուամենայնիվ, բոլորից դեռևս համընդհանուր կերպով պահանջվում է համապատասխան որևէ դիմակ կրել դպրոցի փակ և բացօթյա տարածքներում: Համընդհանուր դիմակ կրելուց բացառությունները ներառում են ակտիվորեն ուտելու կամ խմելու ժամանակը, ինչպես նաև**

բացօթյա վայրերում գտնվելը, որտեղ ֆիզիկական հեռավորությունը կարող է հուսալիորեն պահպանվել: Արդիականացված մակարդակի դիմակ կրելը կարող է պահանջվել սահմանափակ ժամանակով հատուկ հանգամանքներում, օրինակ՝ երբ դպրոցում կա սովորող աշակերտ, որը վերջերս մեկուսացվել է հիվանդությունից և/կամ դրական թեստից հետո կամ վերջերս շփվել է հաստատված վարակված անձի հետ:

- Այլընտրանքային պաշտպանական ռազմավարություններ կարող են որդեգրվել Անհատականացված Կրթություն ստացող կամ 504 Ծրագրերի աշակերտների համար, որոնք չեն կարող օգտագործել կամ հանդուրժել դիմակներ: Նրանք պետ է դրանք փոխարինեն ստորին հատվածում կտոր ամրացրած դեմքի վահանով, եթե դա հանդուրժում են: Առողջական վիճակի, հոգեկան առողջության վիճակի, դիմակ կրելը կանխող հաշմանդամության կամ լսողության խանգարման պատճառով դիմակ կրելուց ազատվելու գնահատումը բժշկական որոշում է, հետևաբար այն պետք է կատարվի բժշկի, բուժակի կամ այլ արտոնագրված բժշկական մասնագետի կողմից, որն աշխատում է բժշկի արտոնագրով: Վերոնշյալ պայմանների հիմքով դիմակ կրելուց ազատվելու համար ինքնագնահատումը, ինչպես նաև ծնողի կողմից հաստատումը չեն հանդիսանում բժշկական որոշումներ:
- Աշխատակիցներին, ծնողներին և աշակերտներին տեղեկատվություն է տրամադրվում դիմակների պատշաճ օգտագործման վերաբերյալ, ներառյալ՝ յուրաքանչյուր օրվա օգտագործումից հետո դրանց լվանալու կամ փոխարինելու անհրաժեշտության մասին:

\_\_\_\_\_

• Դպրոցի մուտքի մոտ, դպրոցի գրասենյակի մուտքի մոտ և ամբողջ դպրոցի տարածքում փակցված նշանները ամրապնդում են այս պահանջը և պատկերում դիմակների պատշաճ օգտագործումը: \_\_\_\_\_

• Եթե հնարավոր է, դպրոցական տարվա սկզբին յուրաքանչյուր աշակերտի տրամադրվում է 2 դիմակ: Եթե դա հնարավոր չէ, ծնողներին և աշակերտներին տեղեկատվություն է տրամադրվում իրենց սեփական կտորե դիմակները պատրաստելու մեթոդների մասին: \_\_\_\_\_

• Ավելի փոքր երեխաների ծնողներին խրախուսվում է ամեն օր երեխային տրամադրել երկրորդ դիմակ այն դեպքերի համար, երբ այն մեկը, որը երեխան կրում է, կեղտոտվի. սա թույլ կտա օրվա ընթացքում փոխել դիմակը: \_\_\_\_\_

• Դպրոցի մուտքի մոտ կամ միջանցքներում կամ այլ ընդհանուր տարածքներում տեղակայված աշխատակիցները աշակերտներին պետք է հիշեցնեն դիմակներ կրելու կանոնների մասին: \_\_\_\_\_

• Աշխատակիցներին, որոնք ներգրավված են այնպիսի գործողություններում, որոնք թույլ չի տալիս ֆիզիկական հեռավորության պահպանում (օրինակ՝ որոշակի աշակերտների ֆիզիկական թերապիայի կամ անձնական օժանդակության ապահովում), ըստ անհրաժեշտության տրամադրվում են համապատասխան անձնական պաշտպանության միջոցներ (ձեռնոցներ, դիմակներ, հանդերձանք և այլն). \_\_\_\_\_

**ՆՇՈՒՄ:** Այն աշխատողներից և աշակերտներից, որոնք միայնակ են գտնվում փակ գրասենյակներում, չի պահանջվում կրել դիմակներ: Աշակերտները կարող են նաև հանել դիմակները, երբ ներսում ուտում կամ քնում են կամ երբ դիմակ կրելը այլ կերպ անհրաժեշտ է (օր.՝ լողալիս կամ լոգանք ընդունելիս): Դպրոցը կորոշի, թե արդյոք ճիշտ է, որ ցածր դասարանների ուսուցիչները կրեն կզակի տակ ամրացող կտորով դեմքի վահաններ՝ որպես դիմակներին փոխարինող տարբերակ, որը թույլ կտա մանկահասակ աշակերտներին տեսնել իրենց ուսուցչի դեմքը և խուսափել հնչյունական հրահանգների հնարավոր խոչընդոտներից: Թափանցիկ հատվածներ ունեցող դիմակները, որոնք տեսանելի են դարձնում շուրթերն ու բերանը, նույնպես օգտագործվում են այդ նպատակով և թույլատրվում են ուսուցիչներին ու աշխատակիցներին՝ որպես արդիականացված դիմակներ կրելու պահանջներից ազատվելու

բացառություն հատուկ այդ նպատակով և միայն այն ժամանակահատվածի համար, երբ այս գործունեությունը պահանջում է բացառություն:

- ❑ Միջոցառումների իրականացում՝ ապահովելու աշխատակազմի, աշակերտների և այցելուների՝ ձեռքերը հաճախակի լվանալը: Սա կարող է ներառել (նշեք բոլորը, որոնք կիրառելի են)՝
  - Աշակերտներին և աշխատակազմին հաճախակի հնարավորություններ են տրվում ձեռքերը 20 վայրկյան օձառով լվանալ՝ օձառը քսելուց հետո լավ տրորելով, և օգտագործել թղթե սրբիչներ (կամ մեկանգամյա օգտագործման կտորե սրբիչներ)՝ ձեռքերը լիակատար չորացնելու համար: \_\_\_\_\_
  - Ավելի կրտսեր աշակերտների համար կանոնավոր կերպով նախատեսվում է ձեռքերի լվացման հաճախակի ընդմիջումներ, ներառյալ՝ ուտելուց առաջ և հետո, պետքարանից օգտվելուց հետո, բացօթյա խաղից հետո և խմբային ցանկացած գործողությունից առաջ և հետո: \_\_\_\_\_
  - Աշխատակիցներին հանձնարարվում է ցուցադրել ձեռքերի հաճախակի լվացումը՝ հատկապես ցածր դասարաններում, երբ զուգարանից օգտվելու ժամանակահատվածը հնարավորություն է տալիս ձևավորելու առողջ սովորություններ և վերահսկելու ձեռքերի պատշաճ լվացումը: \_\_\_\_\_
  - Դասասենյակների մոտ տեղադրվել են ձեռքերի լվացման շարժական կայաններ՝ հնարավորինս նվազեցնելու զուգարաններում շարժումը և կուտակումները: \_\_\_\_\_
  - Էթիլային սպիրտի հիմքով (պարունակում է առնվազն 60% էթանոլ) ձեռքի ախտահանիչ միջոցը հասանելի է աշակերտներին և անձնակազմին բոլոր կարևոր կետերում, որտեղ չկա լվացարան կամ ձեռքի լվացման շարժական կայան (լսարաններում կամ դրանց հարևանությամբ, սենյակներում, որտեղ տրամադրվում են օժանդակ ծառայություններ, երաժշտության և արվեստի սենյակներում)՝ դպրոցի ողջ տարածքում: Նախընտրելի է էթիլային սպիրտի հիմքով ձեռքերի ախտահանիչ միջոցը, և այն պետք է օգտագործվի դպրոցի տարածքում: Որպես հիմնական ակտիվ բաղադրիչ իզոպրոպիլային սպիրտ պարունակող ձեռքերի ախտահանիչ միջոցները դպրոցում չեն օգտագործվում, քանի որ դրանք ավելի գրգռիչ են և կարող են ներծծվել մաշկի միջոցով: \_\_\_\_\_
  - Սպիրտ պարունակող ձեռքերի ախտահանիչ միջոցներ կույ տալը կարող է սպիրտային թունավորում առաջացնել: Ձեռքերի ախտահանիչ միջոցը չպետք է բաց լինի, և մինչև 9 տարեկան երեխաները պետք է օգտագործեն մեծահասակների հսկողության ներքո: Ուսուցիչները և անձնակազմի աշխատակիցները պետք է տեղեկացված լինեն կույ տալու վտանգի մասին, և պետք է զանգահարեն թունավորումների Վերահսկման Կենտրոն հետևյալ հեռախոսահամարով՝ 1-800-222-1222, եթե հիմք կա մտածելու, որ աշակերտը կույ է տվել ձեռքերի ախտահանման հեղուկ: \_\_\_\_\_
  - Ձեռքերի ախտահանիչ միջոցները, օձառը և ջուրը, անձեռոցիկները և աղբարկղերը հասանելի են հանրությանը հաստատության մուտքի մոտ կամ մոտակայքում, ընդունարանում և աշխատավայրի ցանկացած այլ մասում, կամ անմիջապես դրսում, որտեղ մարդիկ անմիջականորեն շփվում են: \_\_\_\_\_

**ՀԱՏՈՒԿ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԱՐՎԵՍՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

- ❑ Երաժշտության դասընթացներ
  - Երաժշտական խմբակային ցանկացած գործողություն մասնակիցներից պահանջում է կրել դիմակ փակ և բացօթյա տարածքներում: Այնուամենայնիվ, անհատները կարող են իրականացնել նման գործողություններ առանց դիմակ կրելու, երբ բացօթյա տարածքներում

մենակ են գտնվում և երբ մյուսներից պահպանում են ֆիզիկական մեծ հեռավորություն, ինչպես նաև երբ փակ դռներով ստուդիայում կամ փորձերի սենյակում միայնակ են:

- Խմբի կազմում փողային գործիքներ նվագելը թույլատրվում է այն դեպքում, եթե պահպանվում են անվտանգության հետևյալ միջոցառումները.
  - Փողային գործիքներ նվագող անձինք պետք է պատշաճ կերպով կրեն ձևափոխված դիմակ, որը թույլ է տալիս անմիջական շփում գործիքի այն հատվածի հետ, որին դիպչում է բերանը նվագելիս: Այն ընթացքում, երբ աշակերտները ակտիվորեն չեն պարապում կամ ելույթ ունենում, նրանք պետք է կրեն ամբողջական դիմակներ:
  - Փակ տարածքում փողային գործիքներ նվագելիս պետք է օգտագործվեն ծածկոցներ՝ գործիքների գանգակաձև բացման հատվածները ծածկելու համար (bell cover):
  - Մասնակիցների միջև պետք է պահպանվի առնվազն 3 ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն:
  - Կատարեք խմբակային փորձերին կամ ելույթներին մասնակցող **բոլոր** չպատվաստված անձանց ախտորոշիչ թեստավորում՝ ՊՇՌ կամ հակազենի թեստերով, շաբաթական առնվազն մեկ անգամ, **և լիովին պատվաստված անձանց թեստավորում, որոնք իրավասու են, սակայն չեն ստացել իրենց խթանիչ ներարկումը:** Փակ տարածքներում փողային գործիքներ նվագող երաժիշտները պետք է շաբաթական առնվազն մեկ անգամ թեստ հանձնեն՝ անկախ պատվաստման կարգավիճակից:
- Ավելի ուժգին շնչառական կաթիլների արտանետման պատճառ հանդիսացող գործողությունների դեպքում, ինչպիսին է երգեցողությունը, խստիվ խորհուրդ է տրվում անձանց միջև ավելացած հեռավորություն պահպանել և այս գործողությունները բացօթյա տարածքներում անցկացնել: Անհատ երգիչները կարող են փորձերն անցկացնել **բացօթյա տարածքներում և** փակ տարածքում՝ **ստուդիայում կամ փորձերի սենյակում**, միայնակ՝ առանց դիմակի, կամ մեկ ուսուցչի ներկայությամբ, եթե երկուսն էլ **պատշաճ կերպով** դիմակ են կրում՝ **համաձայն սույն արձանագրության վերևում ներկայացված ցուցումների:** Խորհուրդ է տրվում մեծացնել հեռավորությունը երգչի և ուսուցչի միջև:
- Մահմանափակել ցանկացած գործիքի, գործիքների մասերի, երաժշտական նյութերի կամ ցանկացած այլ իրերի փոխանակումը (կամ համատեղ օգտագործումը):
- Հնարավորության դեպքում օգտագործել մեկանգամյա ներծծող բարձիկներ կամ այլ անոթներ՝ թքի կամ ջրի արտանետման փականների պարունակությունը հավաքելու համար. օգտագործելուց հետո դրանք դեն նետել կամ պատշաճ կերպով մաքրել:

**□ Թատրոնի դասընթացներ**

- Թատրոնի դասերին մասնակցող աշակերտները և ուսուցիչները պետք է մշտապես կրեն դիմակներ: Խորհուրդ է տրվում, որ պահպանվի հավելյալ ֆիզիկական հեռավորություն, եթե մասնակիցները արտասանում կամ խոսում են (օրինակ՝ թատրոնի աշխատանիստին (workshop) մասնակցող անձինք):
- Հնարավորության դեպքում սահմանափակեք թատերական դիմակների, զգեստների և կեղծամերի համատեղ օգտագործումը: Եթե դրանք պետք է համատեղ օգտագործվեն, ապա ընտրեք այնպիսի թատերական դիմակներ, զգեստներ և այլ իրեր, որոնք ավելի հեշտությամբ կարող են ախտահանվել: Բոլոր թատերական դիմակները պետք է ախտահանվեն նախքան նկարահանման հրապարակում առաջին անգամ օգտագործվելը և տարբեր դերասանների կողմից դրանց օգտագործվելուց առաջ և հետո: Բոլոր համատեղ օգտագործման հագուստները պետք է մաքրվեն յուրաքանչյուր օգտագործումից հետո: Բոլոր կեղծամերը կամ այլ ընդհանուր

օգտագործման արհեստական պարագաները պետք է ախտահանվեն յուրաքանչյուր օգտագործումից հետո:

- Մաքրեք հանդերձարանները, կանաչ սենյակները և նկարահանման (արտադրական) տարածքները՝ օգտագործելով ախտահանիչներ EPA- ի՝ COVID-19-ի դեմ Ախտահանիչների N ցանկից:
- Դիտարկեք փակ տարածքների փոխարեն վիրտուալ կամ բացօթյա տարածքներում փորձերի և ներկայացումների անցկացումը: Դիմակներ պետք է կրել մշտապես, երբ մի քանի անձինք միասին մասնակցում են գործողությանը:

**❑ Պարի դասընթացներ**

- Աշակերտները և ուսուցիչները պետք է մշտապես կրեն դիմակներ: Նրանք կարող են թեթևակի հանել դիմակները ջուր խմելու համար. ջրի ընդմիջումների ժամանակ աշակերտներին պետք է հիշեցնել մյուսներից հավելյալ հեռավորություն պահպանելու մասին, երբ դիմակները հանվում են: Աշակերտներին պետք է հիշեցնել, որ սահմանափակ են ջանքերը այնքանով, որքանով հարմար է գործողությունները դիմակով կատարելու համար, և անմիջապես ընդմիջում վերցնեն ֆիզիկական վարժություններից, եթե սկսում են զգալ շնչառական որևէ դժվարություն: Դիմակները կարելի է կարճ ժամանակով հանել, երբ մասնակիցը հանգստանում և շունչ է քաշում, քանի դեռ նա մյուսներից պատշաճ հեռավորության վրա է գտնվում: Դիմակները պետք է փոխվեն թրջվելու, անձի դեմքին կպչելու և շնչառությանը խանգարելու դեպքում:
- Այն գործողությունների համար, որոնք առաջացնում են ավելի մեծ ծավալի շնչառական կաթիլներ, ինչպիսիք են ֆիզիկական ծանր ջանքերը, խստորեն խորհուրդ է տրվում մեծացնել տարածությունը անհատների միջև և սահմանափակել նման գործողությունները արտաքին տարածքով:
- Հնարավորինս առավելագույնի հասցրեք բացօթյա տարածքի օգտագործումը փորձերի և ներկայացումների համար: Դիմակներ պետք է կրել մշտապես, երբ մի քանի անձինք միասին մասնակցում են գործողությանը:

**❑ Երաժշտության ձայնագրում**

- Տվյալ պահին թույլատրվում է ձայնային/ձայնագրման խցիկներում երգելը, քանի դեռ դիմակները կրում են ցանկացած պահի՝ ինչպես պահանջվում է: Խստորեն խորհուրդ է տրվում տաղավարում ավելացնել հեռավորությունը երգիչների և մյուսների միջև՝ համեմատաբար փոքր, սահմանափակ փակ տարածքում շնչառական կաթիլների մեծաքանակ արտանետման պատճառով:
- Ձայնագրման խցիկի ներսում փողային գործիքներ նվագել այլ անձանց ներկայությամբ այս պահին թույլատրվում է, եթե երաժիշտը համապատասխանում է վերևում ներկայացված բոլոր պահանջներին: Տե՛ս երաժշտության դասընթացներ բաժինը:
- Երգիչներին կամ փողային գործիքներ նվագող երաժիշտներին թույլատրվում է կատարել ձայնային խցիկում առանց դիմակների կամ այլ պաշտպանիչ միջոցների՝ միայն այն դեպքում, եթե խցիկի դուռը փակ է անհատական ձայնագրության համար և այդ պահին խցիկում ուրիշ ոչ ոք չկա:
- Այլ խմբակային գործիքային երաժշտություն կարելի է ձայնագրել ձայնային խցիկում. այնուամենայնիվ, բոլոր երաժիշտների միջև պետք է մշտապես պահպանվի առնվազն 3 ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն, և ինչպես մյուս տարածքներում, այստեղ ևս դիմակ կրելը պարտադիր է:

- Նախքան մեկ այլ երաժիշտի կամ երաժիշտների խմբի կողմից ձայնագրման խցիկի օգտագործելը խցիկը պետք է լավ օդափոխվի (դիտարկեք օդը մաքրող սարքի օգտագործման տարբերակը)՝ թույլատրելու օդի ամբողջական հոսքը, իսկ համատեղ օգտագործվող սարքավորումները (օրինակ՝ խոսափողերը) պետք է ախտահանվեն:

**Ներկայացումներ / Ելույթներ**

- Ցանկացած ներկայացում պետք է հետևի [Ավելի Փոքր Միջոցառումների Համար Լավագույն Գործողությունների Ուղեցույցին](#) COVID-19-ի տարածման վտանգը նվազեցնելու համար, եթե ձեր ներկայացումը կամ միջոցառումը [Մեզա Միջոցառում](#) չէ (սահմանվում է որպես փակ տարածքներում ավելի քան 1000 մասնակիցներով կամ բացօթյա տարածքներում ավելի քան 10000 մասնակիցներով միջոցառում), իսկ այդ դեպքում դուք պետք է հետևեք [Մեզա Միջոցառումների Ուղեցույցին](#):
- Նկատի ունեցեք, որ TK-12 դպրոցների կողմից հովանավորվող բոլոր ներկայացումների ժամանակ բոլոր ներկա անձանցից պահանջվում է դիմակ կրել փակ տարածքներում, ներառյալ ներկայացման ընթացքում ելույթ ունեցողներից՝ անկախ նրանց պատվաստման կարգավիճակից: Այս պահին աշակերտ կատարողներից պահանջվում է նաև բացօթյա ելույթների ժամանակ կրել համապատասխան դիմակներ: Հանդիսատեսից չի պահանջվում դիմակ կրել բացօթյա տարածքներում, եթե ներկայացումը չի որակվում որպես բացօթյա մեզա միջոցառում: TK-12 դպրոցի կողմից հովանավորվող տարածքում անցկացվող ներկայացումը/ելույթը ներառում է ցանկացած կատարողական արվեստի գործողություն, որը վերահսկվում, կազմակերպվում կամ հովանավորվում է դպրոցի կողմից և որն ընդգրկված է որպես աշակերտների ուսումնական կամ արտադասարանական ծրագրի մաս՝ անկախ նրանից՝ ներկայացումը անցկացվում է դպրոցի տարածքում, թե դպրոցի տարածքից դուրս:

**D. ԴԴՐՈՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԵՐ**

- Նախքան դպրոցի սկսվելը անհրաժեշտ է տեղեկատվություն ուղարկել ծնողներին և աշակերտներին դպրոցի գործունեության ծրագրի վերաբերյալ (նշեք բոլորը, որոնք կիրառելի են).
  - Մեկուսացման և կարանտինի կարգադրություններ, քանի որ դրանք կիրառվում են այն աշակերտների նկատմամբ, որոնք ախտանիշներ ունեն կամ հնարավոր է՝ շփվել են COVID-19-ով վարակվածի անձի հետ \_\_\_\_\_
  - COVID-19-ի թեստավորման հնարավորություններ, եթե աշակերտը կամ ընտանիքի անդամը ախտանիշներ ունի կամ շփվել է COVID-19-ով վարակված անձի հետ \_\_\_\_\_
  - Դպրոցում ում դիմել, եթե աշակերտը ախտանիշներ ունի կամ հնարավոր է՝ շփվել է վարակակրի հետ \_\_\_\_\_
  - Ինչպես իրականացնել ախտանիշների ստուգում մինչ աշակերտի տնից դուս գալը \_\_\_\_\_
  - Դիմակների կիրառման պահանջ \_\_\_\_\_
  - Աշակերտների կողմից ֆիզիկական հեռավորության պահպանման և վարակի վերահսկման ցանկացած կարգադրություններին հետևելու կարևորությունը \_\_\_\_\_
  - Փոփոխություններ ուսումնական և արտադպրոցական ծրագրի մեջ՝ վտանգները կանխելու նպատակով \_\_\_\_\_
  - Դպրոցի գործունեության ծրագրեր՝ ծնողների դպրոց այցելությունների վերաբերյալ և դպրոցի \_\_\_\_\_

հետ հեռավար կապ հաստատելու նպատակահարմարության վերաբերյալ \_\_\_\_\_

- Շտապ իրավիճակներում դպրոցի կողմից կապ հաստատելու համար թարմ տվյալների տրամադրման կարևորությունը, ներառյալ՝ ծնողների հետ կապ հաստատելու մի քանի տարբերակներ \_\_\_\_\_
- Այլ. \_\_\_\_\_

- Այս արձանագրության պատճենները փակցված են դպրոցի բոլոր հանրային մուտքերի մոտ և ներբեռնված են դպրոցի կամ շրջանի կայքի հանրային էջում:
- Ամբողջ դպրոցում փակցված են նշաններ, որոնք անձնակազմին և աշակերտներին հիշեցնում են դիմակներ կրելու և ձեռքերը լվանալու կարևորության մասին:
- Դպրոցի բոլոր հանրային մուտքերի մոտ փակցված են նշաններ, որոնք այցելուներին տեղեկացնում են, որ նրանք չպետք է հաստատություն մտնեն, եթե COVID-19-ի ախտանիշներ ունեն:
- Դպրոցը մշակել և շրջանառության մեջ է դրել հաղորդակցման ծրագիր այն դեպքերի համար, երբ պահանջվի դպրոցի մասնակի կամ ամբողջական փակում՝ COVID-19-ով խմբային վարակման դեպքերի պատճառով:
- Հաստատության առցանց հարթակները (կայքէջ, սոցիալական ցանցեր) հստակ տեղեկություններ են տրամադրում շենքի աշխատանքային ժամերի, այցելությունների կանոնադրության, ակադեմիական և արտադպրոցական ծրագրերի փոփոխությունների և դիմակներ կրելու, ֆիզիկական հեռավորություն պահպանելու և ձեռքերը լվանալու պահանջների վերաբերյալ:
- Հաստատության առցանց հարթակները հրահանգներ են տալիս աշակերտներին, ծնողներին և ուսուցիչներին, թե ինչպես կապ հաստատել դպրոցի հետ՝ վարակման կամ վարակակրի հետ շփվելու դեպքերում:

**E. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ, ՈՐՈՆՔ ԱՊԱՅՈՎՈՒՄ ԵՆ ԿԱՐԵՎՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՎԱՍԱՐ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ**

- Մշակվել է Անհատականացված Կրթական Ծրագրերի (IEPs) և հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար նախատեսված 504 Ծրագրերի թարմացման նախագիծ՝ ապահովելու, որ կրթությունը շարունակվի առանց աշակերտի համար անհարկի վտանգի:
  - Այս նախագիծը ներառում է ուսումնական տարվա սկզբին ծնողների հետ ակտիվ շփման մեթոդ՝ ապահովելու, որ երեխայի կրթության և անվտանգության հետ կապված հարցերը լուծված լինեն:
  - Անհատական IEP-ների և 504 ծրագրերի փոխոխությունները կարող են ներառել հեռավար ուսուցում, դասասենյակների փոփոխություններ՝ հարմարեցնելով երեխաների կարիքներին, հաճախում դպրոց՝ առանձնացված տարածքում քիչ թվով աշակերտների հետ, կամ միաձուլված (հիբրիդային) մոտեցում՝ կրթությունը համատեղելով դասարանային և հեռավար ուսուցմամբ:
  - IEP-ների և 504 ծրագրերի ձևափոխման քայլերը, որոնց նպատակն է ապահովել աշակերտների անվտանգությունը, համապատասխանում են նահանգային և դաշնային օրենքների համապատասխան դրույթներին:
- Վարչական ծառայությունները կամ գործողությունները, որոնք կարելի է առաջարկել հեռավար կարգով (օր.՝ տվյալ առարկայի համար գրանցում, ձևաթղթի հանձնում և այլն) տեղափոխվել են

առցանց:

Վերոհիշյալ միջոցառումներում չընդգրկված ցանկացած լրացուցիչ միջոցառում պետք է նշվի առանձին էջերում, որոնք բիզնեսը պետք է կցի այս փաստաթղթին:

Սույն արձանագրության հետ կապված ցանկացած հարցի կամ մեկնաբանության համար կարող եք կապ հաստատել հետևյալ անձի հետ.

Բիզնեսի

կոնտակտի անուն՝ \_\_\_\_\_

Հեռախոսահամար՝ \_\_\_\_\_

Վերջին վերանայման  
ամսաթիվ՝ \_\_\_\_\_

**ՍՈՒՅՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿՎՈՂ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ**

- Դպրոցը պետք է ունենա COVID-19 Զսպման, Արձագանքման և Վերահսկման Ծրագիր, որը նկարագրում է դպրոցի համապարփակ մոտեցումը կրթահամալիրում COVID-19-ի տարածումը կանխելուն և զսպելուն:
- Դպրոցում Վարակի Հետ Շփումների Կառավարման Ծրագիր նախաձեռնելու ծրագիր կամ արձանագրություն, որը համապատասխանում է DPH-ի ուղեցույցին:
- Հիվանդության բռնկման (3 կամ ավելի դեպքեր 14 օրվա ընթացքում) մասին Հանրային Առողջության Վարչությանը անհապաղ զեկուցելու ծրագիր:
- COVID-19 թեստավորումը կանոնավոր դպրոցական գործողությունների մեջ ներառելու ծրագիր կամ արձանագրություն, որը առնվազն պետք է նկարագրի թեստավորման հասանելիության ապահովման ռազմավարությունը այն աշակերտների կամ աշխատակիցների համար, ովքեր ախտանշաններ ունեն կամ գիտեն կամ կասկածներ ունեն, որ շփվել են SARS-CoV-ով վարակված անձի հետ:
- Ծրագիրը պետք է ապահովի, որ թեստավորման բոլոր արդյունքները ներկայացվեն Հանրային Առողջության Վարչություն: Բոլոր աշխատակիցներին հրահանգվել է չգալ աշխատանքի, եթե նրանք հիվանդ են կամ շփվել են COVID-19-ով հիվանդի հետ:
- Դպրոցական շենքեր կամ տրանսպորտ (դպրոցական ավտոբուսներ, ինչպես նաև դպրոցական շենքեր) մտնող յուրաքանչյուր անձ, ով շփվում է այլոց հետ (աշակերտներ, ծնողներ կամ այլ աշխատակիցներ), պարտավոր է փակ տարածքներում կրել դիմակ՝ անկախ պատվաստման կարգավիճակից:
- Դպրոցի աշխատակիցներից պահանջվում է կրել ավելի բարձր կարգի դիմակներ: Վիրաբուժական դիմակները հանդիսանում են նվազագույն պահանջ: Կարող են նաև դիտարկվել ավելի բարձր մակարդակի անձնական պաշտպանության միջոցները՝ PPE (օրինակ՝ KN95 կամ N95 շնչառական դիմակներ):
- Աշակերտներից և անձնակազմից պահանջվում է կրել դիմակ բացօթյա տարածքներում, բացառությամբ ուտելիս կամ խմելիս, ցանկացած մարդաշատ վայրում, որտեղ ֆիզիկական հեռավորությունը հնարավոր չէ հեշտությամբ կամ հուսալիորեն պահպանել:



- Առողջական վիճակի, հոգեկան առողջության վիճակի, հաշմանդամության կամ լսողության խանգարման հետևանքներով դիմակ կրելուց ազատման գնահատումը հանդիսանում է բժշկական որոշում և, հետևաբար, պետք է իրականացվի բժշկի, բուժակի կամ այլ լիցենզավորված բժշկական մասնագետի կողմից, որը աշխատում է բժշկական արտոնագրով:
- Բոլոր աշխատակիցներին, կապալառուներին (պայմանագրային աշխատողներ), վաճառողներին և առաքման անձնակազմին տրամադրվել են ցուցումներ, որոնք վերաբերում են փակ տարածքներում այլոց շրջապատում դիմակների օգտագործման պահանջին:
- Այս Արձանագրության կրկնօրինակները տրամադրվել են բոլոր աշխատակիցներին:
- Ավտոբուսներում մշտապես պահանջվում է դիմակ կրել:
- Նախքան դպրոցի բացվելը ծնողներին և աշակերտներին պետք է տեղեկատվություն ուղարկվի COVID-19-ի կանխարգելման հետ կապված դպրոցական քաղաքականության վերաբերյալ:
- Այս արձանագրության կրկնօրինակները տեղադրված են դպրոցի բոլոր հանրային մուտքերում և դպրոցի կամ շրջանի կայքի հանրային էջում:
- Ամբողջ դպրոցում փակցված են ցուցանակներ, որոնք անձնակազմին և աշակերտներին հիշեցնում են դիմակներ օգտագործելու քաղաքականության և ձեռքերի լվացման կարևորության մասին:
- Դպրոցի յուրաքանչյուր հանրային մուտքի մոտ փակցված են ցուցանակներ, որոնք այցելուներին տեղեկացնում են, որ նրանք չպետք է մուտք գործեն հաստատություն, եթե ունեն COVID-19-ի ախտանիշներ:
- Հատուկ կարիքներ ունեցող աշակերտների համար մշակվել է Անհատականացված Կրթական Ծրագրերի (IEP) և 504 Ծրագրերի արդիականացման ծրագիր, որպեսզի ապահովվի կրթության շարունակումը առանց աշակերտի համար ավելորդ վտանգի:
- Առողջության Պատասխանատուի Հրամանի համաձայն՝ դպրոցի բոլոր աշխատակիցներից պահանջվում է ներկայացնել COVID-19-ի դեմ ամբողջական պատվաստման ապացույց կամ շաբաթական առնվազն մեկ անգամ թեստ հանձնել: